ԱՐԱՐԱՏ

ԱՄԱՍՏԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԹԻՒ Է. ՏԱՐԻ Ի. ՑՈՒԼԻՍ 31

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ. Յաւիտենական կեանքի վերայ մտածութիւն (Քարոզ.)
Գ. Ի. Ա. 289
ՊԱՏՄԱԿԱՆ. Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ (Շարունակ.)
Ռուսոմ—բլկ երկնկեանց 300
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ուսումնարանը եւ ընտանիքը (Քարգ.) Ս. Տ. Գաբրիէլեանց 510
Գիւղացու բոլորը (բանաստ.) Դերեէս Տ. Ալեսքեանց . . . 522
ԱԶԳԱՅԻՆ. Հաշիւ ելից եւ մտից եկեղեցական ծխական երիցասեան երկսեռ.
ուսումնարանաց Նոր Բայազիտու 524
ԱՑԻ ԵՒ ԱՑԻՔ 526
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. (յօրագրութեանց Սիմէոնի) վարչականք, դատաստանականք 529
ՔԱՑՏԱԲԱԲՈՒԹԻՒՆՔ 552

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՑԼԶ—1887

ՅՈՒՅԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ՄԱՏԵՆԻՑ·

ԳՐԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

	Ր.	Կ.
Ա յրիվանք կամ Գեղարդավանք	—	20
Աստուածպաշտութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ	—	70
Արարատ Ամենագիր տարեկան ամբողջ կաղմեալ	2	—
Աւետարան Համաբարբառ վկայութեամբ	—	80
Բենիամին Փրանկլինի կեանքը	—	30
Գիրք Հանդիսակատարութեանց կայսերական տօնից	—	50
* Գոթղոլիա ողբերգութիւն	1	—
Դատաստանագիրք Հայոց Մխիթար Գօշի	3	—
Դաշնագիր	—	15
Դասագիրք բաղդատական Աշխարհագրութեան	1	—
Դասագիրք Ընդհանուր պատմութեան.—Հին դարուց	1	—
Նոյն.—Միջին դարուց	1	—
Դասագիրք Քրիստոնէական Հաւատոյ· Արէլ Եպիսկոպոսի	—	20
Դասագիրք Քրիստ· վարդապետութեան Գ· Ե· Ա յվազեան	—	40
Դպրոց տարեկան 1874—76	2	—
* Եօթն խօսք առ տղայս	—	20
* Թուաբանութիւն զարգացելոց Ա· Գալֆայեան	1	—
* Թամագիրք ատենի	8	—
Թամագիրք ձեռաց	2	—
* Լսոյն Աւագ ուրբաթ	—	10
* » Առումն Կ· Պոլսոյ	—	10
* » Արև	—	10
* » Զատիկ տեառն	—	10
* » Երկինք և երկնայինք	—	10
* » Հռիփսիմէ	—	10
* » Հնութիւնք Եգիպտոսի	—	10
* » Մեծն Ներսէս	—	10
* » Ս· Խաչ	—	10
* » Տօն Ծննդեան	—	10
* Խանգարմունք Հայկաբանութեան	—	50
Կաթուղիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ	—	50
Կանոն աշակերտաց Գէորգեան Ճեմարանի	—	10
Կանոն ընկերութեան Հայոց Ճաւայի	—	10
Կանոն ծխական Դպրոցաց	—	20
Հանդէս Դ· տարեդարձի Գէորգեան Ճեմարանի	—	10



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Է. — ՇՐՋԱՆ Ի. 1887 ՏԱՐԻ Ի. ՅՈՒԼԻՒՍ 31.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎԵՐՑՅ ՄՏԱԾՈՒԹԻՒՆ.

Ա. Տիմ. Զ. 12։

Երկինքը լուսաւորուելէ ամիսներ կերպով իմ գլխիս վրան իւր նուիրական բարձրութիւնից. միշտ իմ եաւէթցս է նայուած թէ ուր եմ գնում ճանապարհորդութեանս միջոցին. այս անկայուն աշխարհիս վերեւումն արդէն ճանաչում եմ ես իմ հայրենի երկիրս, որ թէ շատ հեռու է և թէ շատ մօտ կ։

Անմահութեան վերայ ունեցած մտածմունքս թող բարձրացնէ իմ հոգիս, պարգեւէ ինձ ապահով առաջնորդ, որ ես իմ ճա-

նապարհումն սխալուած չլինիմ. այս աշխարհումն դեռ շատ նեղութիւններ, շատ չարչարանքներ կան քաշելու. բայց ճանապարհորդութեանս մեծ և խորհրդաւոր նպատակն բարեկամաբար դէպ ի վեր, դէպ ի երկինքը դիմել է ինձ սորվեցնում։

Ցիսուսի Քրիստոսի քարոզած կրօնն ինչ սուրբ ճշմարտութիւններ որ մեր հոգւոյ առաջն է բերում, որ մնածողութեան առարկայ լինի մեզ համար, ամենից աւելի մեր ուշադրութիւնը գրաւում նորա տուած ուսումն հոգւոց անմահութեան վերայ։

Մարդուս կեանք սիրելն ու ապրել ցանկալը այնպիսի հակամիտութիւն է, որ մեր սրտի մէջ խորը մնած, ասեմ արմատացած է։ Որքան էլ որ այս աշխարհիս կեանքը, շատ ու շատ ցաւեր ու նեղութիւններ քաշելով, անցկացնելու լինինք, բայց և այնպէս մահկանացու մարդս չէ ուզում կեանքից զրկուել, չէ ցանկանում մեռնել, այլ ապրել է սիրում, ապրել է ուզում։ Բարեպաշտ ձևացող կեղծաւորն՝ այս աշխարհս ու նորա մէջ մեր ունեցած կեանքը՝ թէև միշտ սգոյ տեղ է անուանում, բայց և այնպէս չի ուզում դուրս գալ այս տրտմութեան հովտից, որ ըստ երևոյթին իւր համար ոչ մի բանի տեղ չէ։ Մարդուս ունեցած յոյսն, որ դեռ կապրի, չի մեռնիլ, հոգու վերայ եղողին էլ՝ մինչև իւր վերջին շունչը՝ սիրտը կոտրել, անմխիթար տխրութեան մէջ ընկնել չէ թողնում. այդ յոյսը շատ անգամ չարագործիցն էլ անբաժան է՝ մինչև իւր գլուխը կըտրելու, կամ խեղդուելու տեղը գնալն՝ ու քաղցրացնում է մեծ յանցանքի տէր մարդու բանտի մէջ անց կացրած դառն օրերն։

Այս ցանկութիւնն ու սէրն ապրելու, որ ամեն մահկանացու մարդոց վերայ մեծ ահ է քցում, երբ որ միտքն է գալիս, որ պիտի մեռնի, միւս կողմից էլ պնդացնում է նոցա սիրտը այն հաւատովն թէ՝ իրանց հոգին չի մեռնիլ, այլ կշարունակի իւր կեանքը, մարմինն փչանալուց յետոյ էլ։ Մարդուս կեանքի ու նորա հոգւոյ վսեմ նշանակութիւնն ու կոչումն յայտնուել է միանգամայն նորա այս ցանկութեանը մէջ, որով աստուածային իմաստութիւնն գրեթէ մի չկորուելու կապով կապել է

նորան այս աշխարհիս հետ։ Այն ամենայն ազգերն, որ մի անգամ զարթնել են իրանց անանական բրդուխեան խոր քնից, ըմբռնած են և ունին այն փափագելի գաղափարը թէ՝ իրանց կեանքն այս աշխարհումն չի վերջանալ, այլ գերեզման մտնելուց յետոյ էլ կշարունակուի միւս աշխարհում։ Ամեն կրօնները, մինչև անգամ վայրենի հեթանոս ազգայ ցեղերի առասպելները, քարոզում են թէ՝ կայ երջանիկ մի վիճակ՝ միւս կեանքի մէջ։ Աւելի վատահ է և աւելի հաստատ համոզմունք ունի այդ մասին քրիստոնեան։ Այդ մասին նա՝ իբրև բնական արարած՝ իւր խելքովն ըմբռնած Աստուծոյ յայտնութիւնների հետ ունի նաև Յիսուսի Քրիստոսի յայտնածներն Աստուծոյ կողմից։ Ինչպէս որ իրնքն յաղթեց մահուան, մենք էլ պէտք է մահուան յաղթենք և մեր ապականացու կեանքն վախենք անապական կեանքի հետ։

Թեթևամիտ մարդն էլ չէ կարող չմոածել, կամ ուրանալ, որ յաւիտենական կեանք կայ։ Ամենագաղջ քրիստոնեան էլ, որ իւր օրերն անց է կացնում, ինչպէս որ իւր սիրտն է ուզում, և որ այնպէս է համարում, որ միշտ ողջ պիտի մնայ աշխարհումն ու ապրի, նա էլ, երբ որ միտքն է գալիս իւր գերեզման մտնելը, սարսափում ու զարհուրում։ Զարագործն էլ, որ իւր կրքերի, յիմարութիւնների և մոլութիւնների մէջ խեղդուած լինելով, ամեն իւր սրամտութիւնը բանեցնում գտնելու ճշմարիտ երեւեցող՝ անհիմն պատճառներ՝ որ ուրանայ, թէ աշխարհումն հաստատացնող Աստուած կայ, և ծաղր անի հաւատացողներին՝ թէ մարդուս հոգին տևողական կեանք ունի, որ ինքն առասպել է համարում, — նա էլ՝ իւր զուարճութեանց մէջ, երբեմն երբեմն կամայ ակամայ յանկարծ սոսկում է, երբ որ մոածում է թէ՝ այս կեանքից ջոկ՝ միւս կեանք էլ կայ։ Այս մոածմունքն՝ իբրև մի անեղծանելի ու յարատև ճշմարտութիւն յաղթահարում է նորան։

Որ մահկանացու մարդս միայն այս աշխարհիս կարճատև կեանքի համար չէ ստեղծուել, որ նա ոչ միայն երկրաւոր, այլ և աւելի բարձր աշխարհի կարգին, հոգիների աշխարհին է պատկանում, դորա համար էլ երաշխաւոր են նորան եղե+ վկաներ, որոնց որ նա իւր ամենայն սրամտութիւնովը մարդկային աղգի մտքից ու սրտից հանել, կորցնել չէ կարող. աշ-

խարհիս ամեն աղգերի մէջ այս երեք վկաները օգքա են, որ ամեն մարդիկ էլ հաւատում են թէ՝ Աստուած կայ, ամենքն էլ ունին խղճմտանք ու ամենքն հաւատում են, որ յաւիտենական կեանք կայ։ — Այս երեք բանն է, որ մեր ուշադրութիւնը պիտի գրաւի, այս երեք բանի վերայ է, որ պիտի խօսինք իբրև մարդկային ազգի մեծ դաստիարակների վերայ։

Եւ յիրաւի, աշխարհս ի՞նչ նշանակութիւն ու արժէք պիտի ունենար մեզ համար, եթէ որ այդ երեք մեծ գաղափարն, այդ երեք մեծ բանի վերայ մտածելը չունենայինք։ Ի՞նչը պիտի կարօղանար զսպել ու սանձել մարդուն, այս՝ իւր կատաղութեան ժամանակին՝ անսանձելի կենդանւոյն, եթէ այս երեք միտքը նորա մէջ չլինէր, այս աշխարհիս անհետացած լինէր։ Այնպէս մտածեցէք, որ մահկանացու մարդիկն՝ իրանց վայրենի ցանկութիւններովն՝ իրանց գլխին թողնուած լինէին, ոչ Աստուծոյ հաւատային, ոչ զգային՝ թէ ինչն է իրաւացի և ինչն՝ անիրաւ, ոչ գաղափար ունենային, որ մարդուս կեանքն, գերեզման մտնելուց յետոյ էլ չէ վերջանում,—այն ժամանակ ո՞ւմ կեանքն, ո՞ւմ ունեցածն կարող էր ապահով լինել։ Ի՞նչ երգում կարող էր նորա համար նշանակութիւն ունենալ, որ նորանով կապուած լինէր։ Ի՞նչ օրէնք նորա վերայ զօրութիւն կունենար։ Ո՞ր անմեղութիւն նորա համար սուրբ կհամարուէր։ Երկնքի տակը դժոխք կքացուէր իւր ամենայն արհաւիրքներովը։ Միայն բռնութիւնը, խաբէութիւնը, խարդախութիւնը, հարստահարութիւնն անց կկենային այս աշխարհումն ու կբթագաւորէին։

Արդ՝ եթէ մտածելն յաւիտենական կեանքի վերայ ամենավայրենի մարդու վերայ անգամ այսպիսի կախարդական ներգործութիւն ունի,—ուրեմն ի՞նչ նշանակութիւն պիտի ունենայ քրիստոնէի համար, որ նաւիրուած լինելով Քրիստոսի մեզ յայտնածներին, այս աշխարհիս մէջ քիչ բանի ակնկալութիւն ունի, իսկ դէս աշխարհում ամեն բանի յոյսն։ Յաւիտենական կեանքի վերայ մտածութիւնն այն նշանակութիւնն պէտք է ունենայ քրիստոնէի համար, որ նա Քրիստոսի հետ կարող է ասել թէ՝ իմ թագաւորութիւնս այս աշխարհիցս չէ. իմ հայրենիքս այս երկիրս չէ, այլ Աստուծոյ բոլոր տունն, բոլոր աշխարհս իմ հայրական տունս է։

Բայց և այնպէս ոմն կարող է ուրանալ, որ միտքը բերելն իւր մահն և ինչ վիճակի մէջ լինելը միւս աշխարհումն՝ բարեպաշտ քրիստոնէի սրտի մէջ էլ միշտ այն զգացմունքները չէ շարժում, որ ըստ ինքեան պիտի շարժէր։ Շատ անգամ սաստիկ կոտրվում ենք նորա սիրուց. շատ անգամ տեսնվում է, որ նա չափից դուրս սկսում է ատել ու արհամարհել այս աշխարհիս կեանքը. շատ անգամ մի բոլորովին ծուռ միտք է նորա մէջ ծնեցնում, որ քննի յաւիտենական ապագան, թէև ի զուր և անօգուտ մի աշխատութիւն է իրան տալիս, որով միայն իւր խելքն ու սիրտն է մաշում ու տանում ամեն տեսակ խաբէական երևակայութիւններ անելու. շատ անգամ այս կեանքիս մէջ ունեցած մեր ամենալաւ օրերն է սևացնում ու չի թողնում մեզ վայելել այն մեր ուրախութիւններն, ինչու որ նոցա քաղցրութիւնը դառնութեան են փոխում.

Յաւիտենական կեանքի վերայ մեր ունեցած մտածութիւնն ամեն մի քրիստոնէի համար մի մտերիմ բարեկամի նման պէտք լինի, այն ժամանակն է, որ ոչ մեզ ծանրութիւն է տալիս, երբ որ միշտ մեր մօտն է լինում, ոչ էլ այն ժամանակն մեզ սաստիկ վախեցնում, երբ որ մեր մտքից անց չկացրած միջոցին անսպասելի կերպով յանկարծ մեզ է գալիս։

Եթէ որ այդպէս պիտի լինի և այդպէս պիտի համարինք մեր մտածութիւնը յաւիտենական կեանքի վերայ, ուրեմն լաւ էլ պէտք է ճանաչած լինինք այդ մեր մօտիկ բարեկամին։ Պէտք է իմացած լինինք թէ՝ ինչ յոյս կարող ենք ունենալ այդ մեր բարեկամից, և ինչ կողմանէ նորանից պէտք է վախենանք։ Միայն մտերիմ բարեկամին է, որ սիրով ընդունում ենք ամեն ժամանակ, երբ էլ որ մեզ գայ։

Մահուան վերայ մտածութիւնն այնպիսի մի բան է, որ մեր մտքից հեռացնել չենք կարող ամենևին, ուր մնաց թէ բոլորովին հանելինք. որովհետև գրեթէ ամեն օր մեր աչքի տեսածը մեր միտքն է քցում թէ՝ մահ կայ, մեռնել կայ։ Գերեզմանատան մէջ նոր թաղուած մեռելն ու թառամած ծաղիկը, լուրերն, որ ստանում ենք թէ՝ պատերազմի մէջ այսքան մարդ մեռաւ, կամ թէ մեր այս՝ այն ծանօթ մարդը ծանր հիւանդ է, երեկոյին մեր գնալը քնելու, այն տունն, որոյ մէջ մենք բնակվում ենք, ու որոյ մէջ առաջ ուրիշն է բնակուել ու մեզանից ա-

առաջ մեռնել, միտքներս բերելը մեր ծնողներին, մեր ամուսնին, մեր զաւակներին մեր եղբայրներին ու քոյրերին, մեր ազգականներին, ու բարեկամներին, որ մեզմէ առաջ գնացին դէպի միւս աշխարհն, — այս ամենը մեզ համար դրդումներ են, որ միշտ շարժուած ենք մեզ ու խրատուած մոռանալ միւս կեանքի վերայ, որ մեզ համար մուտ է։

Այս գրածներս աչքի առաջ ունենալով, մնհուան ու յաւիտենական կեանքի վերայ մեր ունեցած մոռածութիւնն, եթէ մեզ համար ոչ անձանօթ խոչոր պէս չպիտի լինի, ուրեմն մեր աչքնամօթիկ քաջեկամը լինի։ Մեր ունեցած մոռածութիւնն յաւիտենական կեանքի վերայ մենք ինքներս պէտք է մեր մէջն ուղղենք, որ ծուռ ու սխալ միտք մեր մէջը չգտնուի. մենք ինքներս մեր պարզ մոռածողութիւնովն պէտք է պարզենք մեզ թէ՝ այն կեանքն ինչ պիտի լինի մեզ համար. կամ մենք ինչ պէտք է լինինք այն կեանքի համար։

Պէտք չէ, որ մենք ընկնենք խոր մոռածմունքների մէջ, որ ի զուր անց կըկենան, ու մեզ համար օգուտ չեն ունենալ. ուզում եմ ասել թէ՝ ի զուր տեղը հարկաւոր չէ գլուխներս կոտրենք, միտք անելով, որ հասկանանք թէ՝ միւս կեանքն ինչպիսի կեանք է, ինչ տեսակ է. ուր և ինչպէս կլինի մեր հոգին։ Այդպիսի բաները քննել ու հասկանալ ուզենալն իմաստուն մարդուն վերջը հօ միշտ հասցնում է միայն այն տեղն, ուր որ նա զգում է թէ՝ ինքն իբրև մարդ՝ սահմանաւոր է ու խելք հասցնել չէ կարող, իսկ յիմարին երևակայել տալի խառը մառը բաներ ու այլ և այլ անհիմն կարծիքներ անել տալի, և այնպիսի ցնորքների մէջ տանում, քցում, որ հոգւոյ հանգստութեան համար անգամ վտանգաւոր կարող են լինել. այնպէս է յաւիտենական մոռածումն նա մտքովն, որ վնասակար ազդեցութիւն կարող է ունենալ՝ թէ մեր մտքի և թէ գործքի վերայ։

Մխիթարաւոր մարդիկ հազարաւոր տարիներով առաջ շատ են միտք արել միւս կեանքի գաղտնիքների վերայ, շատ են քննել՝ ու ոչ մի ժամանակ մի բանի խելք հասցնել չեն կարողացել։ Այն քաղցն, որ Աստուծոյ ձեռքը քցել է այն կեանքի վերայ, անթափանցելի է։ Դու էլ երկար մոռածելով քեզ համար մուտ ու անհասկանալի միւս կեանքի վերայ, ոչ թէ առաջ կթափանցես, քանի որ այս աշխարհիս վերայ ես ապրում, այլ այն ժա-

մանակը միայն, երբ որ Աստուած քեզ աշխարհիցս կկանչէ։ — Ուրեմն հանիր գլխիդ ու դէն քցիր այն միտքը թէ՝ անխորհուրդ վորձեր վորձելովդ կարող կլինիս պարզ տեղեկութիւններ ստանալ հենց այժմ էլ, քանի որ այս կեանքումն ես, ու կիմանաս թէ՝ քո հոգին ինչ վիճակում կլինի յաւիտենական կեանքի մէջ, թէ ուր կլինի նորա բնակութեան տեղը՝ մեռնելուց յետոյ, թէ ինչ պարապմունք կամ զբաղմունք կունենայ մահից յետոյ։ Բանի տեղ մի դնիլ ոչ խօսքերն և ոչ գրածները այնպիսի մարդոց, որ իրանց խելքից հանել ու հնարել են երևակայական գիւժ ու միւժ մտքեր այն բաների մասին, որ մարդուս աչքից ծածկուած են, կամ մինչև անգամ կարծել են թէ՝ ինչ որ իրանք իրանց անմիտ յանգգնութեամբ երազել են, իրանց խօսածն ու գրածը սուրբ Գիրքն էլ է հաստատում», այս ու այն տեղ գրուածներովն։ Աւաղ, ի՞նչպէս են ուզում յաւիտենական կեանքի գաղտնիքները քննել, իմանալ նորա, որոնց հոգւոյ աչքի տկարութիւնը չէ թողնում, որ տեսանեն դեռ այս աշխարհիս բաներն էլ, կամ կարողանան խելք հասցնել աշխարհիս ստեղծման գաղտնածածուկ տնօրէնութիւններին ու կարգադրութիւններին, որ ամեն օր իրանց աչքի առաջն են։ Ի՞նչպէս կարող են իրանք իրանց աւելի իմաստուն կարծել, քան թէ ամենիմաստն Աստուած, որ ապագան առանց պատճառի չէ, որ ծածկել է բարերար աղջամուղջի մէջ։ կամ իրանց աւելի հզօր համարել, քան հզօր Աստուծոյ ձեռքն որ բռնել է վարագոյրը յաւիտենական կեանքի հրաշալիքի առաջ։

Յաւիտենական կեանքի վերայ մտոք անելուց ամենևին հեռու չլինելը՝ նշանակում է այն բանի վերայ մտածել, որ մենք ՃՈՒԱԾ ԵՆ+ ԱՆՎԵՐՋ ԿԵԱՆ+ ՈՒԵՆԱԼՈՒ, որ Աստուծոյ հայրական անհուն սէրն անվախճան է, ինչպէս որ մեր հոգւոյ գոյութիւնն որ՝ ամենիմաստն Աստուած, որ արդէն այստեղ՝ այս աշխարհումն մեզ քանի քանի ուրախութիւններ պարգևեց, այն ժամանակն էլ իւր ձեռքը չէտ չի քաշիլ մեզ պարգևելուց առատ պարգևներ իւր յաւիտենական գանձից, երբոր մենք մեզ արժանի կանենք աւելի բարձր կատարելութիւնների. որ՝ ամենակարող Արարչի շնորհքն ու ողորմութիւնն, որ ի յաւիտենից բոլոր անսահման աշխարհիս վերայ իշխում էր և մեր բանական հոգին էլ ոչինչից ստեղծեց, յաւիտեանս յաւիտենից պի-

ոի շարունակի իշխել ու կառավարել, որ այս մեր անդրդուելի վստահութիւնքն, որով հաւատում ենք նորան, մեր վիճակի ամեն մի ուրիշ կերպ փոխուելն, ուրեմն և այն այլափոխութիւնն, որ լինում է մեզ հետ՝ մեր մեռնելովը, մի բարերարութիւն պիտի լինի մեզ համար, որ մենք այն ժամանակ միայն պիտի յոյս ունենանք մեր մահից յետոյ՝ միւս աշխարհում աւելի լաւ վիճակի, երբ որ մենք մեզ արժանացրել ենք մեր ունեցած կեանքովն, որ մենք միւս աշխարհքում այն ժամանակ կատարելութեան կհասանենք, երբ որ այս կեանքումն աստուածային Փրկչի մեզ ցոյց տուած ճանապարհով գնալով, աւելի կատարեալ ենք եղել. երբ որ մենք աշխարհումն, մի ներքին՝ աւելի մեծ մի գոհունակութիւն ենք ղգում, որչափ որ աւելի ենք առաջ գնում, աճելով իմաստութեան ու առաքինութեան մէջ. այն աշխարհքումն էլ մեր վարձը կլինի անպատմելի երջանկութիւն. բայց եթէ այս կեանքումն մենք մեր հոգւոյ կողմանէ անհոգ մնանք, ինքներս մեզ՝ մեր մեռնելուց յետոյ՝ անկատարութեան ենք դատապարտում:

Յաւիտենական կեանքի վերայ մտածելն՝ ամեն անգամ անքակ ու անբաժանելի կերպով պինդ կապուած պիտի լինի մեր սիրտն ու մեր հոգին լաւացնելու հետը: Ոչ մի ժամանակ միտներս չենք բերել միւս աշխարհի սուրբ և երանելի կեանքն, որ պիտի ունենանք եթէ որ մի և նոյն ժամանակ ինքներս մեզ չհարցնենք թէ՝ այս կեանքումն մի վատաւոր գոյութեան արժանացրել ենք մեզ արդեօք: Եթէ որ ինքներս մեզ չհարցնենք թէ՝ իմ հոգիս կեանքի ամենայն հանգամանաց մէջ փորձով գիտէ արդեօք, որ իրօք սրբութեան մէջ աճել է միշտ, և ուրախ է, որ միւս կեանքում ամեն մի վիճակի ակնկալութիւն կարող է ունենալ:

Հանդերձեալ յաւիտենական կեանքի վերայ մտածելն՝ առանց միևնոյն ժամանակ մտածելու մեր էլ արժանաւոր լինելու մասին՝ մի վատ ինքնախաբութիւն կլինի: Իսկ երբոր այդ մտածմունքը մեզ զօրացնում է ամեն մի բարի ու աղնիւ բանի մէջ, արդէն այս աշխարհումն մեզ համար մի հրեշտակ է, որ Յիսուսի գնացած ճանապարհն է մեզ ուսնում: Այդ մեր մտածմունքը, քանի որ առաջ ենք գնում մեր կատարելութեան մէջ, մեզ համար այնպիսի մի մտածութիւն է դառնում,

որ մեր սրտին մի անխռով ուրախութիւն է բերում և լի է երկնային անդորրութիւնով։

Ցաւիտենական կեանքի մեր ունեցած յոյսն երբէք մեր մէջ չի զարթիլ, առանց կապուած լինելու մեր այն մնքի հետ՝ ոչ ինչ աւելի քաչչ կոչուն։ Մենք չենք կարողանալ հանդերձեալ կեանքի վերայ մտածել, առանց մեր աչքի առաջն ունենալու մեր երկրաւոր կեանքի շուտով անցկենալը։ Մենք աւելի լաւ կզգանք, որ անմտութիւն է մնքն իրան թողնելը չափից դուրս և անմխիթար կերպով տխրիլ ու ցաւիլն այնպիսի բաների համար, որ ամենևին չեն տրուած մեզ մեր մնայուն սեպհականութիւնը լինելու համար, այլ մի ժամանակ միայն ունենալու համար։ Ինչու որ այն ամեն բանն, ինչ որ ձեռք ենք բերում ու վայելում ենք, ոչ թէ մերն է, այլ հոգինը։ Մենք միայն մի կարճ ժամանակ այդ բաներից օգտուողներն ենք, վայելողները։ Միայն մեր բանական հոգւոյ կատարելութեան մէջ յառաջանալու ու զարգանալու համար է, որ ժամանակաւորապէս պարգևուած է մեզ այս աշխարհիս վերայ եղած ամեն բանն՝ իբրև նպաստող միջոցներ. միայն մեր հոգւոյ իրան ազնուացնելն է, որ փրկում է մեր հոգին, որովհետև մեր հոգւոյ միշտ աւելի կատարելագործութեան մէջ գտնուելն է, որ նորանից անբաժան է։

Բայց որ մեր մտածմունքը յաւիտենական կեանքի վերայ՝ մեր մէջ ծնեցնում է մտածմունք մեր կեանքի ոչնչութեան վերայ, չպիտի այդ պատճառով մեզ անտարբեր աչքով նայել տայ այժմեան մեր կեանքի գեղեցկութիւնների վերայ, որ մեզ հրապուրում են։ Ոչ մի մարդու չպէտք է սաստիկ տխրութեան մէջ քցի ու աշխարհս բոլորովին արհամարել տայ, այլ աւելի և աւ սիրտ տայ քրիստոնէին իւելացի կերպով վայելելու նորա բարիքն, որ պարգևում է մեզ Աստուած իւր ողորմութիւնովն։ Ինչու համար էլ պիտի աւէինք մեր կեանքն, որ պարգև է մեզ աստուածատէս մեզ սիրող Արարչից։ Ինչու համար պիտի աւէինք՝ կամ արհամարհէինք աշխարհս, որ ինքն անթիւ հրաշալիքներով է զարդարել։ Մի՛թէ պախարակելի բան չէր լինիլ, եթէ որ ուսումնասէր երեխան գպրոցն արհամարհէր նորա համար, որ ցանկանում է շատ շուտ իմաստուն լինել ու շատ հասկացող։ Ո՛վ մարդ, որ մի փոքրիկ, ցածլիկ բոյս ես, առաջ բողբո-

ջիր, կանաչիր, տերևներդ բաց արա, ճիւղեր տուր. մի ուզենար ժամանակից առաջ կատարեալ կերպով ծաղկած դրուխեան մէջ լինել ու շքեղութիւնովդ փայլել։

Յաւիտենական կեանքի վերայ մեր ունեցած մտածութիւնն՝ այս կեանքն ուրախ սրտով վայելելուց մեզ ոչ թէ պէտք է հեռացնի, այլ աւելի պէտք է մեզ յորդորի, որ Աստուծոյ մեզ պարգևած մեր օրերն, որչափ որ տպրելու ենք այս աշխարհումն, յօժարամիտ սիրով անցկացնենք։ Ինչու որ այստեղ է ապագայ կեանքի համար մեր նախապատրաստուելու տեղն, այս աշխարհումն է, բաղդաւորութեան ու անբաղդութեան մէջ գտնուելով յաւիտենական կեանքի համար ուսումն առնելու, լուսաւորելու վարժատունն։ Ի՛նչպէս կարեկցելի է մեզ համար ինքնասպանի՝ ոչ ոքին չհաւանելու՝ և հէնց իրան էլ անհաճոյ գործն, որ աշխարհիս նեղութիւններից, ձախորդութիւններից ու ցաւերից տանջուելով, յանդուգն ձեռքով կտրում է այն կապերն, որով կապուած էր այս կեանքի հետ։ Ո՞վ էր տուել նորան այն վիճակն, որոյ մէջ որ նա այս աշխարհումն պիտի լինէր։ Ինչո՞ւ ուզեց նա Աստուծոյ՝ մեր երկնաւոր Հօր արած տնօրէնութիւնից հրաժարուել, չընդունելով, ու նորա առաջնորդութեան տակից դուրս գալ, իւր խելքովն իրը թէ փախչելով, ազատուելով։ Կարծո՞ւմ է նա, որ ամենիմաստ Արարիչը՝ մեր անմիտ յամառութեանը համար իւր արած վճիռը կփոխի։ Կարծո՞ւմ է նա, որ Աստուածանից ու նորա արած տնօրէնութիւններից իւր գլուխը վախցնել կարող է։

Ի՛րիստոնեան, հաւատալով իւր հոգւոյ անմահութեանն, որ ամեն մարդոց յայտնուած է, ինչ որ այս աշխարհումն իրան պատահի, բարի՝ կամ չար, ինչ որ ձեռք բերի այս կեանքումն, ամեն բանն գործ կածի իրրև միջոց, որ իւր հոգին բարձրացնելով ու տիրելով, ազնուացնի, ու, ամենայն արատներից ազատ պահելով՝ սուրբ լինի։ Նա այս աշխարհս, այս փորձանաց տունն, այս՝ մեր փորձուելու տեղն, ուր որ թէ բարիք և թէ չարիք պէտք է տեսնենք, կսիրի, որովհետև գիտէ, որ մեր աւելի բարձր վիճակի համար պատրաստուելու տեղն է։ Նա մի օր՝ առանց վախենալու և զարհուրելու՝ կտեսնի, որ իւր ճանապարհորդութեան վերջին օրն եկաւ, հասաւ ու պանդխտութիւն քաշելուցը պրծաւ։

«Բայց երբոր այս ապականացու մարմինն՝ անապականութիւն կհագնի, և մահկանացուն՝ անմահութիւն, այն ժամանակ կկատարուի Սուրբ Գրքի այն խօսքն, որ ասում է թէ՝ մահը յաղթութեան մէջ ընկղմուեցաւ» Էլ հետքը չկայ, այլ կայ միայն յաղթող կեանքը։ «Մա՛հ, ո՞ւր է քո յաղթութիւնդ. դժո՛խք, ո՞ւր է քո խայթոցդ (վիրաւորող ու ցաւեցնող զօրութիւնդ)։ Բայց գոհութիւն Աստուծոյ՝ որ մեզ Քրիստոսի Քրիստոսի ձեռքովը յաղթութիւն տուեց։

Երբ որ մեր Տէրն այս աշխարհիցս մեզ կկանչի, այն ժամանակ երանի նորան, ով որ զինուորուած, պատրաստ կլինի։ Այն ժամանակ երանի նորան, ով որ՝ առանց սիրտը դող ընկնելու, բարով եկար ասելով, ուրախ սրտով կկարողանայ ընդունել մահուան հրեշտակին։ Հոգիները կամացուկ վերեւ են թռչում, դէպի լուսի անսահման բարձր տեղերն, ուր որ իշխում է ամենից մեծ Հայրն, որոյ արած գործը գթութիւն է միայն ու ողորմութիւն։ Այնտեղ՝ մեր ամենակարող Տիրոջ աստեղազարդ սուրբ և յաւիտենական Աթոռի չորս կողմում կլսուեն ուրախութեան ու ցնծութեան ձայներ։ Ինչ որ մի մահկանացուի աչք չէ տեսել, հոգին շատ պարզ կնկատի։ Ինչ որ ոչ մի մարգու մտքից չէ անցկացել, այնտեղ ամենապայծառ կերպով կերացուի, կյայտնուի իւր առաջն։ Այս աշխարհիս վերայ հէնց մէկ խօսք միայն գիտենք, որոյ մէջն են արդէն բոլոր երկինքներն և որն որ դեռ և ես հազիւ ենք հասկանում. այս մէկ խօսքին՝ երջանկութիւն են ասում։ Այն ժամանակ միայն. երբ որ մեր աչքը կփակենք աշխարհիս՝ ու մեր մարմինը կփտի, այն ժամանակ դուրս կգայ, կբարձրանայ պարարտ հասկեր ունեցող ցորենն, որ խուրձեր պիտի կապուի ու կտարածի երկնային ուրախութիւն։ Այն ժամանակ, ո՛վ երկնաւոր Հայր, ինձ էլ արժանի արա տեսնել Քո անպատմելի երանութիւնդ։

Թարգմ. Գէորգեան Գրիգոր Եպիսկոպոս Աղաւիրեանց.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՀԱՅՐՏԱՏՑ·

(Շարունակ· Ամսոյս, Բ· Ջ·)·

ՁՕԴՈՒԱԾ ԻՊ·

1) ԱՂԹԱՆՑ ՓՈՍ·

Զայսմ տեղւոջէ այսպէս պատմեն աւանդապահ ծերունիք, թէ ի սկիզբն 14 դարուն Թշնամին քրիստոնէից մեծ բռնակալն Ասիոյ Լանկ-Թամուր հիմն ի վեր կործանեալ զյոլով աշխարհս եմուտ ի Հայաստան և յոլով նախճիրս արեան գործեալ քանդեաց կործանեաց զբազում քաղաքս և զգիւղս, եհաս, ասեն, ցսահմանս Հաղբատայ լեռնային ճանապարհաւ ի գիւղն Խաչէ-Դռռ կոչեցեալ և անտի զօրու ծանուց դիմեաց ի վերայ Հաղբատեցւոց առ ի կործանել զաշխարհահռչակ վանքն, եկն եհաս մինչ ի տեղին՝ որ կոչի Աղխանց Փոս· քնակիչք Հաղբատայ և կուսակրօն միաբանք վանիցն ապաստան եղեալ յաղօթս առ Աստուած, և պատրաստեալ զանձինս ի մահ յայտնի՝ միմիայն կամելով վերստին պահպանել ի գերութենէ զաստուածընկալ կենսատու սուրբ խաչն՝ ի ձեռս առեալ զայն սուրբ նշանն ելին ընդ առաջ բռնակալին առ ի համոզել զմիտս նորա և խնդրել զգթութիւն· Լանկն-Թամուր տեսեալ զհանդէս միաբանական թափորի՝ զարհուրեալ դողացաւ յաներևոյթն հրաշից աստուածընկալ Փայտին կենաց և աճապարեալ ի տեղւոջէն Աղթանց-փոս դարձաւ յետս զօրօք հանդերձ ի փախուստ· Իսկ մի ոմն ի զօրաց Մանդ անուն՝ տեսեալ զվախուստ նոցա և իմացեալ զնախախնամութիւն վերին տեսչութեան, որ աներևութաբար մարտնչէր ընդ Թշնամեաց, պնդեցաւ զհետ փախստէից քանի մի զինավառեալ արամբ մինչև ցգլուխն Օղէ քարափին, և անտի և զ շարունակաբար վանեալ հալածեաց զնոսա մինչ ցկէս ճանապարհն Հաճարկուտի· ուրանօր յետս հայեցեալ Թշնամեաց՝ տեսին զքանի մի արս, որք հալածեն

զնոսա, ուստի յարձակեալ ի վերայ նոցա նահատակեցին զնոսա. և ապա կալեալ զՄոնդն ի մէջ ճանապարհին հարին զգետնի. և վէմ՝ մի մեծ եդեալ ի վերայ նորա ճխլեալ, ճմլեալ ջարդեցին զնա. և ինքեանք փախստական գնացին ի գիւղն Խաչի-Դուռ, և անտի անցեալ ի Բերդիկ մտին ի գիւղն Ախօպավ (պղնձահանքն) քանդեցին զկաթուղիկէ Աստուածածնայ եկեղեցւոյն Ցուռնաց: Ցօրէ աստի մնացեալ է կոչումն տեղւոյս Ախպանց-ֆօս. այսինքն յաղթանաց կամ յաղթութեանց փոս, որ ձիարշաւ հեռի է ի վանից Հաղբատայ յարևելս. իսկ միւս կոչումն, Մանպօսպ ի մէջ ճանապարհին Հաճարկուտի, ուր ընդ վիմօք ծածկեցաւ Մոնդ, և մինչև ցայսօր ահագին վէմն այն կոչի Մոնդաքար: Մերձ սորա ի վերայ տափարակ բլրոյ սակաւ մի հեռի ի միմեանց կառուցեալ կան ուխտատեղիք յանուն սրբոյն Պետրոսի և Բարդուղիմէոսի առաքելոցն, այլ այժմ յաւերակս նոցա միմիայն տեսանին կիսակոտոր խաչաքարք: — Ի շրջակայս Հաղբատայ այժմ գտեալ աւերակքն երբեմն մարդաբնակ գիւղօրէից են այսոքիկ:

2) ԽԱՉԻ — ԴՈՒՌՆ.

Ձառաջին տեղի աւերակ գիւղօրայիցն մերձ ի Հաղբատ կարէ ունիլ Խաչի — Դուռն: Դիրք և նիստ սորա գովելի է և յարմարաւոր վասն երկրագործութեան խոտամարգաց և գոմայանդոց: Տեղիս յամենայն ժամանակի, մատակարարէ Հաղբատեցւոց ձեռն օգնականութեան յամենայն հարկաւոր դէպս: Բացարձակ վարելահողք սորա սատար լինին ժողովրդոց առատ պըտղաբերութեամբք, բարձրուղէշ մայրիք սորա պիտոյանան ի պէտս շինուածոց. իսկ խոտամարգիք սորա նուիրեն զանուշդ ի կերակուր չորքոտանեաց: Իւրաքանչիւր գերդաստան Հաղբատայ՝ իսկ երկնկեանք առանձնակի ունին աստ զբաժանեալ վարելահողս, տնատեղիս, կալս և խոտամարգս. կարեմ ասել, թէ Խաչի-Դուռն է գարուընն Հաղբատեցւոց ամենայն հարկաւոր պարագայիւք:

Ի գիւղատեղւոջէ աստի յարևմուտս ի վերայ Հանքաճին բլրոյ կառուցեալ կայ սագաշէն քարակերտ եկեղեցի յանուն սրբոյն Սարգսի զօրավարին. ի կիսաքանդ պարսպին տեսանին աւերակք սենեկաց ի պէտս հոգևոր պաշտօնատարաց ի ժա-

մանակս շինուԹեան ուխտատեղւոյս։ Ցիւրաքանչիւր ամ որպէս Հաղբատեցիք նոյնպէս և ի մերձակայ գիւղօրայից ուխտաւորք գան խնկօք և պատարագօք ի դուռն սուրբ եկեղեցւոյս՝ ի տօնի Վարդավառին։ Մեծահանդէս է տօնախմբուԹիւն տեղւոյս, զկնի սուրբ պատարագին ուխտաւորք ղենուն զոչխարս և զարջառս, պատրաստեն կերակուրս, և նստեալ ընդ հովանեաւ բարձրուղէշ ծառոց՝ ուստեն համեստ քաղաքավարուԹեամբ արք և կանայք։ և ապա յառնեն ի կատարել զխաղերգուԹիւնս ի հանդէս մեծափառ տօնին, ջուր ցանելով ի վերայ միմեանց, երգեն զերգս նուիրեալս յաստղաց յանուն սրբոյն Սարգսի։

Արտաքոյ պարսպի սորա է շքեղ հնաշէն կալատան Հաղբատայ վանից, իսկ յարևելս առ ճանապարհաւն է հին գերեզմանատունն նախնի կամ իսկապէս ասել հեԹանոս բնակչացն Խաչի-Դրան մեծամեծ անտաշ տապանաքարիւք։ Ի հիւսիսակողմն ի ձորակին հոսի աղբիւր ջրոյ, բերեալ խողովակօք ի Սուրբ Լոյս լեռնէ յարբուսն բնակչաց տեղւոյս։

3) ԾԻՎԱՆԻ.

Ի Խաչի-Դրանէ գայր ի վայր ընդ ձորամէջն ճանապարհ ուղի ի գիւղատեղին Ծիվանիք։ Աւերակ սորա բոլորովին ծածկեալ է մայրիւք և մացառօք, ի քանի մի տեղիս կանգնեալ կան փոքրագիր սպիտակ խաչաքարք՝ եղծեալ արձանագրուԹեամբք։ Ի հնումն այս ձորագիւղ եղեալ է ճոխ և հարուստ, և այժմ տեսանին ի սմա աւերակք քարուանսարայի և կրպակաց, վարելահողքն յոյժ սակաւ, կարծեմ այս ձորագիւղ լեալ է իջեւան երԹևեկուԹեան ի ներքին դաշտագիւղօրէից ի վերին լեռնաբնակ գիւղօրայս։ Այժմ յանբնակ վայրի աստ Հաղբատեցիք երբեմն պահպանեն զտաւարս իւրեանց։

4) ԱՋԻԹ.

Աւերակ գիւղատեղիս կայ առ ստորոտով Ամիր-Զաքարայ լերին ի հարաւակողմն Խաչի—Դրան, յոյժ յարմարաւոր են գիրք սորա ի մէջ ստորանկեալ լեռնափակ ձորագաշտի։ Այս յերկուս Թաղս բաժանեալ գիւղատեղին ունի յոլով վարելա-

հողս, ջաղացատեղիս, խոտամարգիս, գոմայանդս, մայրիս, պտղաբեր ծառս, հին գերեզմանատունս հանդերձ անտաշ տապանաքարիւք և կիսաքանդ աւերակաւ միով եկեղեցւոյ. որով ցուցանի երբեմն մարդաբնակութիւն սորա. այլ թէ ե՞րբ կամ ո՞ւր գնացին բնակիչք այսր մեծանիստ աւերակի՝ չէ յայտ ումեք: — Մերձ սորա է Քիսպոս+ Հանդ գիւղատեղին՝ յաւերակս:

5) ՄՈՒՐԱՇԷՆ ԿԱՄ ՆԱՒՐԱՇԷՆ.

Մերձ ի ծաղկազարդ և ի խոտաւէտ Գլխանէդ դաշտահովիտ լեառն դէպ ի հարաւ է աւերակն այսր գիւղատեղւոյ, ունելով բաւականին վարելահողս, արքիւրս և առուակս և մայրիս: Տեսանի աստ աւերակն հին եկեղեցւոյ, և վաղեմի գերեզմանատունն որձ և անտաշ տապանաքարիւք: Քսան ամաք յառաջ քան զայս սոյն գիւղաբնակ հարիւրամեայ կիներն Թամար անուն Ամիրջանեանց Շնօղեցի չափազանցութեամբ պատմէր զճոխ բազմութենէ և զկործանմանէ գեղջս յաւազակաց լեկզեաց, որք յարիշտակեալ զբազմաթիւ նախիրս, գերի վարեցին զբնակիչս. իսկ մնացեալքն փախստական անկան յայլ և այլ տեղիս, թողին զգիւղն աւերակ:

6. ԿԱԽՄԱԽՈՒՏ.

Առ ստորոտով Ա-ալջնաքլը-ի լերին գտանի աւերակ գեղջս. առանց հնութեանց ինչ. այլ միմիայն գերեզմանաքարքն առ բարձրաւղիշ Մամբրէի կոչեցեալ կաղնեաւն ցուցանեն զլինելութիւն գեղջս: Կարծիս ունին ումանք, թէ ի Կախմախուտ՝ ի հնումն եղեալ են վրանաբնակք կամ թափառականք:

Մերձ սորա է աւերակն Ինջոպաղի-ղէ, այժմեան Խնճորանց թալայ, կից ընդ Ո-ոաջ թալային: Ի հարաւակողմն Խաչիդրան գտանի ուխտատեղին սուրբ Յակոբ:

7) ԲԵՐԴԻԿ.

Է աւերակ ամրապինդ գելատեղւոյ ի վերայ միոյ բլրադաշտի պատեալ անտառօք և անմատչելի քարաժայռիւք. աստ ի Բերդիկ ի հարաւ գտանին խաչազարդ գերեզմանատուն հանդերձ ստուար տապանաքարիւք և երկու սագաշէն քարակերտ մատ-

ռունք. յորմ առաջնոյն կայ խաչ կանգնեալ այսու արձանագրութեամբ։ «Ես Բէգլարս կանգնեցի զխաչս ինձ և մոր իմոյ Աղասի»։ Մերձ ի միւս մատուռն ի վերայ խաչաքարին գրեալ է այսպէս «Ծամիր սպասալարութեան Զաքարէի և Իվանէի ես Գրիգոր որդի Ցիսէի՝ թոռի զՀիւնաւարահարկս*) Բերդկայ վանն Շահնշահի արևշատութեան և ինձ մեղացս թողութեան»։

Ի Բերդկաձորի աստ առ ընթեր պտղաբեր այգեստանեայ ի վերայ Դէբէդայ գետոյն տեսանի ցարդ վաղեմի հիմնարկութիւն քարաշէն կամրջի, ի Բոմբ իշխանէն. երևի վաղահաս մահուամբ նորա շինութիւնն մնացեալ է կիսակատար, և սրբատաշ քարինք կուտակեալ կան ի լանջավայրս բերդկաձորոյ։ Մերձ այսր կիսակատար կամրջի ի վերայ յերկուց կողմանց սեպացեալ քարաժայռից կառոյց ապա Ցովհաննէս քահանայ մասնակցութեամբ եղբարց իւրոց զնոր կամուրջ ի հիմանց քարուկրեայ բրգօք յաւուրս իշխանութեան Պարոն Սադունին, և ի թուին ՉԻԲ (1273) կանգնեաց ի ծայրս կամրջին յապառաժ վիմին ստուար պատուանդանօք հսկայաձև քարեայ խաչ յանուն սուրբ Ցովհաննէս Աւետարանիչի. ուր յաճախեն ուխտաւորք ի Հաղբատայ։ Ի վերայ պատուանդանի խաչին գրի այս արձանագրութիւն։

Կամաւն Աստուծոյ յիշխանութեան Պարոն Սադունին և ի տէրութեան տէր Ցովհաննիսի ես Ցովհաննէս քահանայ և եղբարք իմ Ցունան, Դաւիթ և Մխիթար կանգնեցաք զսուրբ խաչս և զկամուրջս ի հիմանց ... գնած է ... գինն ...», ասացէք Աստուած ողորմի ինձ և ծնողացս և մնուցանողիս Ստեփ ... ի թուին Հայոց ՉԻԲ»։ Ի ճակատ խաչին գրեալ է «Սուրբ Աւետարանիչն Քրիստոսի Ցովհաննէս»։

Այս կամուրջ ի վերջին ժամանակս կործանեցաւ. բայց յաւուրս իմ հոգելոյս տէր Ցովհաննէս քահանայն Պարոնբէգեանց Տփխիսեցի ի 1836 ամի, և տէր Ստեփանն Մանդինեանց Տփխիսաբնակ Հաղբատեցին ի 1843 ամին սեպհական ծախիւք իւր-

(*) Ո՛չ ուրեք տեսանեմ, թէ ի Բերդկայ բերեալ իցեն ձիւն որպէս հարկ, թերևս պահանջեալ իցէ՛ն երբեմն դրամական հարկ անուամբ յԻնաւաքահարկ որպէս այժմեան խոտահարկ, կամ անտառահարկ։

եանց նոր ի նորոյ շինեցին սահմանակամաճ կերտուածովք վասն յիշատակի իւրեանց։

Հանդէպ Բերդկաձորոյ յայնկոյս գետոյն մերձ ի կամուրջն է գոմայանդն Հայոգմոյ, որ ունի առ ափամբ գետոյն զքանի մի օրավար վարելահողս զէպ ի Բադէնք։

8) ՆԵՂՈՑ.

Ընդ մէջ աւերակացն Գլիզնաձորոյ և Խանջակայ յարևելս կոյս ի վեր գնացեալ քարքարուտ ճանապարհաւն ելեալ ի քարագլուխն տեսանես զաւերակ գեղջն Նեղոց, փոքր դրիւք և խաչազարդ հանգստարանօք յանմատչելի և յանառիկ վայրս։ Բնակիչք սորա յամենայն ժամ հոչակեալ են քաջութեամբ ընդդէմ յարձակմանց Լեկզեաց, և ցարդ ևս առակօք խօսին ծերունիքն զքաջութենէ նախնի բնակչաց տեղւոյս թէ՝

« Մահի ի Նեղոց՝ ձեռս առայ սղոց։ խերխեցի Լեկզիս, հանգեաւ սրահիս քոց, լաւցաւ Ջանիս խոց »։

Այս սուղ բանք յայտնի ապացոյց են քաջագործութեանց Նեղոցեցւոց, որք իբրև առաջնապահ զօրք կացեալ աստ՝ պահպանեալ են զհունն Դէբէդայ գետոյն (որ այժմ կոչի Լեկը-Գէօ-պ, անդ) և զմեծ ճանապարհն ձորոյն, սահման գնելով յարձակմանց Լեկզեաց ի գիւղօրայս Ձորագետցւոյ։ Փառք և պատիւ անձնանուէր քաջացն Նեղոցայ։

Ի վեր քան զայս գիւղատեղին յարևելս կոյս մերձ ի լեառն գտանի Սէբօ-նի թալայ ամարանոցն բնակչացն Նեղոցայ։ Մերձ ի Նեղոց են անապատ տեղիքն Տաղաւնոյ և Խանջակեայ սահմանաթիւ վարելահողիւք և բազմաթիւ պտղատու ծառօք։ Սարգիս արքեպիսկոպոս առաջնորդն Հաղբատայ ի 1086 ամին ատ ի Խանջակաձոր շինեաց ագատաղաց ջրաղացն, էարկ զայգի, տնկեաց դրախտանման զանազան մրգաբեր ծառս ի փառս սրբոյ Նշանին, և ապա ի 1089 ամին կանգնեաց զնշանն տէրունական, զէն հաւատացելոց և պահապան թագաւորացն մերոց Կիւրիկէից։ Սմբատայ և Գագիկ՝ զարմի սոցա։ Զարձանագրութիւն նորա տես 1 ՝ յօդ. գրոյս № 4։

9) ԳԼԻՋՆԱՋՈՐ *).

Աւերակ գիւղատեղիս ի ձորադաշտի ի հարաւակողմն Դէբէդայ գետոյն ունի վարելահողս բաւականս և զպիտանացու անտառս և ծառս պտղաբերս։ Ի վեր քան զգետն ի դուռն ձորադաշտին բարձրանայ փոքրիկ քարաբլրակ յորոյ վերայ ի տափարակ տեղւոջն կանգնեալ կայ խաչաքար յանուն ՈՒՐՔ Նահապետ։ Պատմեն թէ մեծն Վարդան՝ ի խաղալն իւր զօրօք յօգնութիւն Աղուանից ի պատերազմին ընդդէմ Պարսից, աստ իջեւանեալ էր, և զկնի նահատակութեան նորա տեղիս այս կոչեցեալ է վանն յիշատակի նորա Նահապետ։ Ի վեր քան զայս է գերեզմանատունն մեծամեծ տապանաքարիւք։ Յայսմ աւերակի Հաղբատեցիք ի ձմեռան պահպանեն զտաւարս։ Մերձ ի քարկապն Վարդանայ ի վերայ գետոյն եղեալ քարաշէն կամուրջ Ցէղոց կոչեցեալ, որոյ քարուքանդ հիմունքն այժմ մի միայն տեսանին։

10) ԿԱՐԱՊԵՏԱՋՈՐ.

Աւերակ գիւղատեղիս գտանի յանկոյս ձորագետոյն ի գոգ միոյ ձորադաշտի առ ստորոտով Շէկաքար լերին. սակաւ են աստ վարելահողք, և աւերակք այգեստանեայց և յոլով պըտղաբեր ծառք ընդ ձորն ի վեր։ Գոյ աստ տաք աղբիւր։ Ցեղր գիւղատեղւոյն է խաչազարդ գերեզմանատուն, և աւերակն եկեղեցւոյն յանուն սրբոյ Կարապետի։ Աստ է մաքուր կրահանքատեղին Կաթանքայ։

11) ԱԹՈՌԻԿ.

Հանդէպ կայան բերդի յարևմուտս յանկոյս գետոյն Դէբէդայ մերձ ի սահմանս Պղնձէհանքի գտանի Աթոռիկ գիւղատեղին վանաց ի վերայ արեգունի լանջավայրի ունելով զառաջեաւ առ ալին գետոյն զվարելահողս և զաթոռակատաւին, բայց վեր-

(*) Ցատուկ անունս Գլէնայոր նշանակէ գլի կամ գլորեցի զնա ի ձոր։ Ասեն՝ թէ երկու տիրող իշխանք յարուցեալ են վէճ և կռիւ վասն կալուածատեղւոյս, մին յաղթեալ մնացեալն ի քարագլիւհ անտի ձգեալ է զնա ի ձոր։ Ցօրէ անտի մնացեալ է մինչև ցարդ գլի - զնա - ի ձոր կոչումն,

*Ջինս ոչ ունելով ի մօտոյ զՋուր՝ զոգեաս անպէտ մնայ մինչև ցարդ։ Յեղր գիւղատեղւոյն ի վերայ փոքրիկ բլրոյ կառուցեալ կայ մենարանն յանուն Անդրէի զօրավարին, այժմ խոպառ խախտեալ։ Ջմենարանէս այսպէս գրէ Կիրակոս. «Առեալ զայս գիր հաւանութեան իմաստնոյն վարդապետին Վարդանայ, առաքեաւ կաթուղիկոսն Կոստանդին ի Կլայն Հռոմէական, և ինքն եկեալ ի Կայանայ մենարանն իւր, զոր սուրբ Անդրէ կոչէին, հանդէպ անառիկ բերդին Կայանոյ և անդ դադարեալ յուսաւացանել զբազումս, որք աշակերտէին նմա վարդապետական բանին»։

Այս արժանայիշատակ վարդապետ կացեալ ի մենարանի իւրում վախճանեցաւ խաղաղական մահուամբ և եղաւ ի շիրիմ։ Կանգնեալ կայ ի վերայ դամբարանի սորա մինչև ցարդ հսկայաձև խաչաքարն. և ի մեծադիր կոփածոյ տապանաքարին փորագրեալ է թիւ մահուան ՉԻԲ (յամին 1273)։ Ի խաչանիշ շիրմէ աստի ի ձորակն ի վեր տեսանին աւերակք լարաձև շինուածոց նախկին բնակչաց Աթոռակայ։

12.) ԽՐԱՄԱՁՈՐ.

Ի Հաղբատայ երեք մղոնաչափ հեռաւորութեամբ յարեւելս հիւսիսոյ է Խրամաձորն լի աւերակօք տանց և այգեստանեայց և բարձրաւղէշ ծառով ընկուզենեաց, ի ձորամիջի անդ գոյ ականատիպ աղբիւր՝ քարեայ աւազանօք։ Հիմունք լարաձև աւերակացն ցուցանեն զդասաւորութիւնս շինուածոց նախնի բնակչաց տեղւոյս ի բերդակագլուխ բլրադաշտին տեսանի աւերակն գիւղատեղւոյն Խրամաձորոյ սակաւ վարելահողիւք։ — Ի գլուխ Խրամաձորոյն գոյ խաչազարդ գերեզմանատուն. միջավայրի խաչաքարն կոչի յանուն սրբոյն Գէորգեայ զօրավարին. դաշտավայրն գերեզմանատան անուանի «Ել—է գլուխ» վասն դժուարութեամբ ելիցն ի ձորէն ի դաշտս Հաղբատայ։ Ասեն թէ՝ Լանկ—Թամուր յԱղտալայէն ճանապարհաւն Խրամաձորի վերատին դիմեաց աւերել զՀաղբատ, և պահնակք կալեալ զկիրճս ուղւոյն յետս դարձուցին դատարկաձեռն. ի ստորոտս քարագլխոյն առաջի աւերակ դղեկին առ ճանապարհաւն տեսանին գերեզմանք նահատակելոցն ի զօրաց Լանկ—Թէմուրի կամ ի Նէկղեաց։ Դղեակն Խրամաձորի առաջնապահ զօրաք

բազմից կալեալ է զառաջս աշխարհաւեր թշնամեաց, ելելոցն յԵլ—ի գլուխն սիրել յափշտակութիւն և կոբճանուամն Հալբատայ և վերին գիւղօրէից։

Յատուկ անուանք գիւղատեղեացն Հաղբատայ բերեն ընդ ինքեանս զանազօտ պատմութիւն և բազմադարեան յիշատակաց և կենաց հնոց նովաւ տան մեզ տեղեկութիւն, թէ նախկին ժողովուրդն յորպիսի դրութեան եղեալ է, և քանի՛ չարութբարիս տեսեալ է յընթացս կենաց իւրոց յայսմ աշխարհի ըստ միջնադարեան յեղափոխութեանց ժամանակին։ Այժմեան բազմաթիւ հնագոյն գերեզմանք ի դաշտի ի սար և ի ձոր յայտնապէս վկայեն զբազմամարգութենէ նախկին բնակչաց այս Զորափոր նահանգին։

ՑԱՌԻԱՒ ԻՆ·

ՏԵՍՈՒԹԻԻՆ ԻՇԽԱՆԱՊԵՏԱԿԱՆ ԱՆՑԻՑ ՎԵՐԻՆ ՀԱՑԱՍՏԱՆԻ·

1·) Աստղն ազատութեան և ինքնիշխանութեան սկսաւ լուսափայլիլ յիններորդ դարուն ի վերայ Հորիզոնի քաղաքական կենաց խեղճ Հայաստանի։ Նախարարական ցեղն Բագրատունեաց ունելով զառաջին տեղի ի մէջ քաղաքական կենաց Հայաստանի լաւութեամբ Աշոտոյ Ա· բարձրացաւ ի գահ արքունական· բայց ոչ կարաց ունիլ զնմանութիւն հռչակաւոր տոհմին Արշակունեաց։ Սակաւութիւն բնակչաց, աղքատութիւն նորածին տէրութեան, ապականութիւն վարուց և բարուց, զինուորական անկարգապահութիւն, ներքին և արտաքին պատերազմունք, անհնազանդութիւնք քանի մի հզօր նախարարաց և ձգտողութիւնք նոցա առ ի հաստատել զառանձին ինքնիշխան թագաւորութիւն հանգոյն Աշոտոյ Ա· պատճառեցին զմեծամեծ վնասս այսր նորաբողբոջ թագաւորութեան և բազմակողմանի զարգացման հասարակական կենաց։

2·) Յաճախակի փոփոխութիւն թագաւորաց, զրկումն թագաժառանգ արքայորդւոյն յաթոռոյ, մաքառումն եղբօր արքայի բազմիլ ի գահ արքունի՝ տկարացուցին զնորածին Բագ-

բառնալ տէրութիւնս, և ոչ թողին յառաջ խաղալ թագաւորական հաւատարիմ պաշտօնէից առ ի պատրաստել զհաստատ և զհզօր տէրութիւն։

3.) *Ցառաջագոյն օր քան օրէ անհամար խռովութիւնք, երկպառակութիւնք, ապստամբութիւնք, և արիւնահեղ ազգային պատերազմունք. օտարասէր կողմնապահութիւնն և ուսումնասիրութիւնն Հայոց ձեռնտու եղեն քանի մի հզօր նախարարաց՝ օգուտ քաղել ի թոյլ ներքոյզ տէրութենէ անտի, ի բաց արկանել զիշխանութիւն օրինաւոր թագաւորի. և յանկարծ հաստատեցին նոքա զքանի մի ինքնագլուխ մանր և անզօր թագաւորութիւնս։ Օրինակ։*

1.) *Ի վասպուրական նահանգի սկսաւ թագաւորութիւն Արծրունեաց 908 թ. որ անդ և ի Սեբաստիա ընդ իւրն թագաւորաք տևեալ զամս 170. վերջացաւ յամին իբր 1080։*

2.) *Ի կարս քաղաքին Վանանդայ կանգնեցաւ փոքրիկ թագաւորութիւն Հայոց, որ ընդ երեք թագաւորաք տևեալ զամս 122. իսպառ բարձաւ յամին 1080։*

3.) *Ի Բաղք գաւառի Սիւնեաց սկսաւ փոքրիկ թագաւորութիւն Հայոց ընդ վեց թագաւորաք ձգեալ զամս 196. դադարեցաւ ի 1166 ամին։*

4.) *Թագաւորութիւնքն Անձևացւոց և Ռշտունեաց բարձրացուցեալ զդրօշակ անկախութեան ցաճուցին զղօրութիւնս Հայոց։*

5.) *Ո՛չ արկանեմ ի թիւ սոցա Հայկազեան հռչակաւոր առանձին թագաւորութիւնն Աղուանից, Առ ի ցոյց ամօթալի անմիաբանութեան և անհնազանդութեան նախնեաց մերոց արժան վարկանիմ յայտնել ի շուր աւենեցուցից, թէ յայսմ միջոցի մի միայն ի մեծն Հայաստան կային եօթն հակաթոռ թագաւորք Հայոց. օրինակ, 1.) Դագիկ օրինաւոր թագաւոր Հայոց յԱնի. 2.) Աբաս ի Կարս. 3.) Աշոտ ի Վասպուրական. 4.) Գուրգէն յԱնձևացիս. 5.) Սենեքերիմ ի Ռշտունիս. 6.) Վասակ ի Սիւնիս. և 7.) Դաւիթ ի Տաշիրս։ . . . Աւաղ տապալեալ Հայաստանին . . . . Հայաստան էր ընդարձակ և ճոխ, լի ընդ ամենայն տեղիս Հայ բնակչօք. բայց միայն հնազանդէր այնմ թագաւորի՝ ընդ որ հաճէր. իսկ թագաւորն՝ որոյ իշխէր, հաղիւ թէ այնր և նմի գաւառին, ուր ինքն բնակէր, ժո-*

ղովուրդն տալբակուսեալ չգիտէր, որում թագաւորի ցուցանիցէ զհպատակութիւն։

4.) Ապա նկատեցուք. Վերին Հայաստանն ըստ հայկական աշխարհագրութեան կոչեցեալն՝ Աշոցք, Տաշիր, Լօռի, Գուգարք, Ուտի և Արցախ. այժմեան Բամբակաձոր, Լօռի, Բօրչալի, Ղազախ, Շամշադին և վերնամասն Ղարաբաղի ունելով զամուր և զանմատչելի տեղիս դրութեան, կարելի՛ էր արդեօք հանդարտ մնալ. ո՛չ. նա ևս յղացաւ ունել զմի նոր թագաւորութիւն և ահա Բագրատունի Դաւիթն Անհողին որդի Գուրգենայ, Թոռն Աշոտոյ Ողորմածի բարձրացոյց ի 906 թ. զդրօշակ անկախութեան ի ժամանակս Բագրատունի օրինաւոր թագաւորաց, բաղկացոյց զմեծ իշխանութեան իւրոյ Զօրագետի հաստաբաղուկ և վիճխարի դինավառեալ երիտասարդօք զամս 56. Որդի նորա Կիւրիկէ Ա. յամին 1046, զամս 64. որդիք և թոռունք նոցա Աբաս, Սմբատ, Կիւրիկէ Բ. 1089. Դաւիթ Բ. Կիւրիկէ Գ. և այլք թագաւորեցին յորդւոց յորդիս մինչև ցվերջ 12 դարուն ի վերին Հայաստան։

5.) Այս նորատեսիլ գարնանային ծաղկութիւնն ի Զօրագետի մերում՝ առիթ եառն արքայազն, պայազատ և սեպուհ իշխանաց Հայոց սեպհական ժողովրդականօքն գալ բնակիլ ի Զօրափոր կազմել զնոր ինքնիշխանութիւն ի դաշտին Շիրակայ, ուր սկիզբն առնու Ձորագետն Դէբէդայ մինչև ցխառնուրդս Կուր գետոյն. և ունելով զպաշտպանողական զօրս հալածեցին զԹշնամիս, և եղեն պատճառ նորանոր շինութեանց ի Զորափոր գաւառին։ Այժմեան լարաձև աւերակքն գիւղօրէից և պէսպէս շինուածոց, կիսաքանդ բերդօրայք, և պալատք իշխանապետաց երևին մինչև ցարդ, նաև կանգուն շէն և անշէն եկեղեցիքն, թագաւորաշէն վանօրայքն, հոյակապ կամուրջքն, հարթ և արձակ ճանապարհքն Հաղբատայ, Սանահնի, Լօռւոյ, Տաշրատափի, Խուժուռնոյ մինչև ցբերդաքաղաքն Շամշվիլտէ. յայտնի ցուցանեն զբազմամարդութիւն Զորափոր գաւառի. և այս պատճառաւ ի միջին դարու Հաղբատ և Սանահին ստացան զանուն որպէս Մայրաքաղաքի նոյնպէս և Հայրապետանոցի. տե՛ս ի գիրս նախնի մատենագրաց մերոց։

6.) Ի 1104 ամի վերին Հայաստանն կրեաց զմեծ նեղութիւնս. զօրավարն Պարսից Խըդիլ ամիրայ յանկարծակի յար-

ձակեցաւ ի վերայ Աղուանեան—Գուգարաց թագաւորութեան Հայոց և յետ բազմադիմի աւերածութեանց և որածութեանց հրձիդ արար զվանօրայս Հաղբատայ և Սանահնի նաև զՎօռի բոլոր գիւղօրայիւքն։

7.) Յետ ծանրակշիռ հարուածոց անկաւ թագաւորութիւնն Աղուանեան—Կիւրիկեցւոց և որդիք վերջին Կիւրիկէ արքայի ի Հաղբատ նեղեալ և ճնշեալ ի Դաւիթ արքայէն վրաց խոյս եառուն ի Զորափոր գաւառէ, գնացին բնակեցան յԱրցախ—Ուտի նահանգ։ Եւ տէրութիւն նոցա իսպառ վերջացաւ յամին իբր 1110-ն։—Ցօրէ ասոի 1124. թ. Վանքն Հաղբատայ անկաւ ընդ իշխանութեամբ Վրաց և բարձրացաւ հրամանաւ արքայից և կաթուղիկոսաց յաստիճան ա[illegible] առանձին սահմանեալ վիճակաւ։

8.) Ի գառն ժամանակս երկպառակութեանց, ծագելոց ի մէջ Սելջուկեան թաթարաց՝ Դաւիթ արքայ Վրաց պատեհ ժամն գտեալ սիրեաց (1124) հիւսիսային կամ է Վէրն կոչեցեալ Հայաստանի, և յաղթական զօրօք առաջնորդութեամբ իշխանաց Հայոց դիմեալ ի Շիրակ, սիրեալ մայրաքաղաքին Անւոյ՝ խաղաղացոյց զերկիրն, յանձնեաց զկառավարութիւնն երկուց քաջայաղթ զօրապետաց իւրոց Աբուլատի և որդւոց նորին Իվանէի։ Դիմիտրի Ա. Հանգոյն հօր իւրոյ զամենայն աւուրս թագաւորութեան իւրոյ պատերազմեցաւ ընդդէմ Սելջուկաց։ Ասպա Փալտուն ամիրայ այլազգի իշխան անհամար զօրօք զամն ողջոյն պաշարեալ զԱնի, ի վերջոյ առեալ զայն, նուաճեաց և զՇիրակ գաւառ։

9.) Զկնի 50 ամաց Գէորգի Գ. արքայ Վրաց զօրացեալ վանեաց զՍօլօման շահն Խլաթայ, սիրեաց Անի քաղաքին, որոյ կառավարութիւնն յանձնեաց Ամիր-Սպասալար Պարոն Սադունին Արծրունւոյ, բայց տեսանելով՝ թէ այս իշխան կամի հաստատել զանկախ իշխանութիւն իւր, ստիպեաց զնա վախչիլ առ սուլթանն Ատրպատականի Ալթաբէգ Էլ-Ղազի, և ի տեղի նորա կարգեաց կառավարիչ ի վերայ Անւոյ զՀայազգի իշխանն Սաթձա որդին Իվանէի։ Ի յաջորդ ամին Գէորգի սիրեաց Դուինն քաղաքի և յաղթեաց Էլ-Ղազիոյ, որ ապա առաքեաց զԱլփ—Ասլան զօրապետն թաթարաց բազմութիւ զօրօք յաղթեաց Գէորգեայ և էառ վերստին ի ձեռաց նորա զԱնի։ Զկնի 10 ամաց

Գէորգի զարձեալ տիրեաց Անւոյ, և յաւուրս յաջորդաց նորա Սալաճալարն Զաքարէ և Աթաբէգն Իվանէ հայազգի իշխանապետքն երկայնաբազուկ Արդութեանց ընդերկար ժամանակս պատերազմ մղելով ընդ Պարսից և ընդ այլազգի տիրօղ իշխանաց, տիրեցին մեծի մասին Վէրին և Աբխազիոյ Հայաստանի և ամն 60 պահպանեցին ի խաղաղութեան ղնորանուաճ զերկիր իւրեանց մինչև ցարշաւանս Թաթարաց։

10.) Ի սմին ժամանակի Գէորգի Գ. ոխակալութեամբ ջնջեաց զազգատոհմն Որբելեան իշխանաց Հայոց, մինչ այն Լիպարիտ և եղբայր նորա Իվանէ ընդ երկուց որդւոցն Էլիկում և Իվանէ գտին ինքեանց ապաստանարան առ դրանն էլ—Տէգիղոյ։ Զընդարձակ կալուածս Որբելեանց բաժանեցին ի մէջի իւրեանց այլ և այլ իշխանք. իսկ գմիւս մասն արքունի գանձարանն ինքեան սեպհականեաց գոռոզութեամբ։

11.) Ծառանգ Գէորգիոյ Գ. գերահռչակ թագուհին Թամար, որ փառաց ի փառս բարձրացոյց զիշխանութիւնն Վրաց, յետ նուաճելոյ զԿաւկազաբնակ ազինս, և մղելոյ զերևելի պատերազմունս ընդդէմ Պարսից, և տիրելոյ բոլոր տարածութեանց երկրակոմանցն Կուր և Երասխ գետոց, թոյլ ետ Որբելեան Հայ իշխանաց վերադառնալ ի Հայաստան. և շնորհեաց նոցա ի պատիւ նախահարցն իրրև սեպհական հայրենիք և ժառանգական կալուած զնահանդն Սիւնեաց։—Սոյն Որբելեան իշխանքն օր ըստ օրէ զօրացեալ ի նահանգին Սիւնեաց, տարածեցին զբազուկս իւրեանց ի վերայ մեծի մասին արևելեան Հայաստանի, վանելով անտի զմահմետականս, տիրեցին մինչև անգամ մայրաքաղաքին Անւոյ և կառավարեցին զայն ինքնիշխանութեամբ։

12.) Յաւուրս սոյն արժանայիշատակ թագուհւոյ բազումք յազատ իշխանաց վերին Հայաստանի հռչակեցին իրրև սպարագործ զանձինս իւրեանց պէսպէս քաղաքական և դինուորական ծառայութեամբք, որոց երևելեաց անուանքն՝ բաց ի պատմագրաց մերոց այժմ բացայայտ երևին յարձանագրութեանց վանօրէից վերին Հայաստանի, ուստի աւելորդ համարիմ գյիշատակեալսն յարձանագրութեան վերստին յիշատակել աստ. բայց ի Սմբատ իշխանէն, որոյ կալուածատեղիքն մինչև ցարդ ի բերանս ժողովրդոց կոչին Սմբատանց-Տնէք ի Հաղբատ։

13·) Ի սմին ժամանակի նման այլոց իշխանաց բնակելոց ի Զորափոր, իշխան ոմն Սմբատ անուն, որդի Քրդին, որդւոյ Ուքանայ իշխանաց իշխանի կալեալ ի հարաւակողմն Հաղբատայ յանտառալից Ձորամիջին զտեղի բնակութեան եկաց անդորր կենաց· և ապա սկսաւ կտրել զանտառս, հարթել զուղիս, յարմարել զվարելահողս, տնկել ի Ձորամիջին ընդ մէջ երկուց քարաթաղուխ տափարակաց զոզկուզաբեր այգիս դրախտանմանս պաղաբեր ծառոք: Ի տորոտաս այգեստանեայց իւրոց ի վերայ Ձորամիջի գետոյն շինեաց ջրաղացս· իսկ ի կատարս քարաբլրոյն մերձ յաղբիւրն Օտարի շէնս արարեալ շինեաց տուն, տեղի և ամբարանոցս, և ի վերայ Զ-ը-ա-ն աղբեր՝ զհոյակապ պալատ իւր· մերձ ի պալատն կառոյց սրբատաշ վիմօք զմատուռ Ս-ր-ԳՂԳ-ՂՒ անուն, այժմ կիսաքանդ· իսկ ի շարս միապաղաղ քարալանջին զդժուարագնաց քարայրս կրազանդ որմովք պատեալ, արար ապահանարան ի ժամ յարձակմանն թշնամեաց:
—Սահմանք Սմբատանց Տաների են· ի հիւսիսոյ՝ ընթացք Սեղիք առուակի, յարևելից՝ լեռնակատարն Սուրբ—Լուսոյ, ի հարաւոյ ծիլաձաքաձորն, իսկ յարևմտից՝ քարագլուխն Որնակայ տափի: Ի սմին տարածութեան ձորք, բլուրք, հող և ջուր, անտառք և խոտամարգք են սեպհականութիւնք իշխողացն Սմբատանց Տաների:

14·) Սմբատեանք հետզհետէ բազմացեալք կրեցին սակաւութիւն ի մասին կալուածոց, գնեցին զգոգաձև բաւական վարելահողս ի դաշտին Որնակայ յարևելից — հիւսիսոյ մինչև ցՓալացի ջուրն: Ապա անյայտ պատճառաւ ծագեցաւ մեծ խռովութիւն և մարդասպանութիւն ընդ մէջ Սմբատեանց և Որնակեցւոց, բայց միջնորդք խաղաղութեամբ հաշտեցուցին, և զսպանեալս թաղեցին ի տահմանագլուխս կալուածոցն Սմբատեանց յՈրնակ· և ի նշան հաշտութեան կանգնեցին զքարեայ խաչ, որ մինչև ցարդ կոչի Մարդասպանի Խաչ:

15·) Յետ բազմատեսակ յեղափոխութեանց Սմբատանց Տներն և յաւերակ դարձաւ ի ձեռն թաթար բռնակալաց· և Սմբատեանք ազգովին ցիրուցան եղեն, ոմանք ի սուր սուրերի մնաշեցան և ոմանք ընդ Շահնշահեան տոհմին վախատեամբ ազատեցին զմնացորդս իւրեանց ի վերին Վրաստան: Յետ արշաւանացն Շահաբասի Սմբատեանք երևեցան ի Հաղբատ· և

մինչև ցաւուրս Ուտէացի Յովհաննէս իշխանին հաստատ մնացին ի Ձորամիջի անդ ց 1730 ամն. և յորժամ արևելեան բռնակալք զօրացեալ տիրեցին Հաղբատայ և այժմեան 12 աւերակ գիւղօրէից, յափշտակեցին զկայս Վանիցն, գերեալ զբնակիչս, արարին զՀաղբատ իսպառ ամայի, յայնժամ Հաղբատեցիք և Թոռունք Սմբատեանց, նաև Շահնշահեանք, Շիօյեանք, Բէգթաբէգեանք, Ամիր—Սադունեանք, Քուրդ—Ութանեանք, Աւաքեանք և Պարոնեանք թողեալ զՀաղբատ տեղափոխեցան ի Վրաստան կամ յայլ տեղիս և ոչ ևս ոսն կոխեցին յաւերակս Հաղբատայ։

16.) Հաղբատ և շրջակայ գիւղօրայք նորա ընդերկար մնացին անմարդաբնակ իբրև ամայի անապատ մինչև ց 1776 ամն. բայց յորժամ նստաւ յաթոռ թագաւորութեան Վրաց Հերակլ Բ. արքայ Վրաց ի պատճառս պահպանելոյ զպարսկային սահմանագլուխս տէրութեան իւրոյ ի ձեռն Աբրահամ վարդապետի (որ կաթուղիկոսացաւ) Թէքիրդաղցւոյ վերստին նորոգեաց զՀաղբատ, արար շէն և մարդաբնակ։ Ըստ արքայական առանձնաշնորհութեան և վանն ամրութեան տեղւոյն քարոզութեամբ յիշեալ եպիսկոպոսին ի սուրբ միջոցի նախ և առաջ բնակեցան աստ Հայազգի եկք—Սիմոնեանք, Նամբարեանք, Գրիգիսեանք, Պրանեանք, Ամրամեանք, Բէգիջանեանք և Աւաքեանք ընդ որս և փողոհարուստ տանուտէր Յովհաննէս յազգէ Քուրդ Ութանայ այժմեան Քուր—Ուհանանց Երզնկեանն, յետ կորուսանելոյ ի Դաղստան զգերի վարեալ զերկուս հարազատ եղբարս իւր վերադարձաւ ի Ղզլարայ առ Զաքարիա եպիսկոպոսն առաջնորդն Հաղբատայ ի Թիֆլիզ, և ապա գնաց աստի ի Հաղբատ յուխտ ի համբոյր սուրբ Նշանին, բարեկամացաւ հարստութեամբն ընդ կողմնակալ Վրաց Սիմոն պարոնին, և ընկալեալ ի նմանէ զտանուտէրական իշխանութիւն ի Հաղբատ, գնեաց բաւական դումարաւ զտնատեղիս և զվարելահողս հաստատ սեպհականեաց ի ձեռն կողմնակալացդ Վրաց և Մէլիքաց Հայոց, սեպհականեաց ի ժառանգութիւն յորդւոց յորդիս, և ապա զվաղեմի կալուածատեղիս «Սմբատանց Տների», ձեռն ի գործ արկեալ վերանորոգեաց զայգեստանեայս, շինեաց պամիճեայն հարկաւոր շինուածս տանց, գոմոց, մառանաց և զաւերակս ջրաղացաց։ Այսպէս տնաշէն բարեկարգութեամբ

քաղաքաւարեալ և հասեալ ի ծերութիւն թողեալ զերիս որդիս, Վարդան, Մարգար և Յարութիւն, վախճանեցաւ ի 1822 ամի։ Զսա կոչեցին գիւղականքն Փուր—Ուհան փոխանակ ասելոյ Փուրդ Ուքան յանուն նախկին իշխեցողին Սմբատանց Տների։

Զգնածու կայուածագիր սորա կրկին հաստատեաց Վրաստանի արքունական պալատն Տէրութեան Ռուսաց ի 5 Մայիսի 1843 ամի բոլորագրութեամբ ի յայտարարական Մատենին համարաւս № 103 և 973 ի սեպհական ժառանգութիւն տոհմին Փուրդ—Ուհանեան Թէզիկեան Երզնկեանց։ Այս է վերջին մարդաբնակութիւն Հաղբատայ։

17.) Այժմ դէպ յարևելս վերին Հայաստանի դարձուցուք զբան մեր։ Ի սկզբան ԺԲ դարուն բերրի, ճոխ և լեռնոտ երկիրն Վարաբաղու ընդ մէջ Երասխ և Կուր գետոց ունելով ի միջի իւր զԱրցախ, զՍիւնիս, զՈւտի և զԳուգար նահանգս վերին Հայաստանի 200,000 Հայ, 100,000 Թուրք և Պարսիկ բնակչօք պահպանիւր ինքնագլուխ իշխանութեամբ մելիքացն Հայոց։ Տիրապետութիւն Պարսից աստ միայն լոկ անուամբ էր, Վարաբաղն ընդ իւր մելիքացն էր մի պարզ Հայկական սէրութիւն՝ բաժանեալ ի հինգ նահանգս—Ջրաբերդ, Գիւլիստան, Վարանդ, Խաչէն. Դուզախ և Ուտիագուգար. իւրաքանչիւր նահանգ ունէր կառավարիչ մի ինքնագլուխ Հայ իշխան, կոչեցեալ Մելիք+կամ Մալիք+, որ Արաբերէն նշանակէ թագաւոր։—Ցետ գաղտնի թղթակցութեան և պատգամաւորութեան, Բաւիէրա, որ բարեկամն էր արևելեան քրիստոնէից, յղացաւ ի միտս ազատել զՀայաստան և զՎրաստան ի լծոյ Պարսից։ Կայսրընտիրն Բաւիէրայի առաքեաց ի 1706 զՄինաս վարդապետ և զԻսրայէլ Օրին ի Ս. Պետերբուրգ խնդրել առ այս զգործակցութիւն մեծին Պետրոսի։

(Կը շարունակուի)։

Ռոստոմ—Բէկ Երզնկեանց։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԸ

ՄԱՏԱՂ ՍԵՐՆԴԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ, ԵՒ ՆՈՅՆ՝ ՄԻՄԵԱՆՑ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ.

(Շարունակութիւն, Ա. տարի Բ. Զ.)

Միայն՝ եթէ ընտանիքը և ուսումնարանը դէպի ուղղութեամբ մանուկների զարգացման ընթացքի վերայ ներգործումն, եթէ երկուսն ևս ճիշտ միևնոյնը արգելում կամ թոյլատրումն, միևնոյն առաքինութիւններն հաւասար միջոցներով են խնամում, միևնոյն սխալների դէմ վճռողաբար երկուսն ևս մաքառումն, այն ժամանակ սանիկների բարոյական ոյժը կը բարձրանայ և կը զօրանայ, և նոցա ներքին զարգացումն մի կանոնաւոր ընթացք կը ստանայ։

Այժմ փորձենք թէ ինչպէս ուսումնարանը և ընտանիքը իրանց ներգործութիւնների վերաբարմամբ մանուկների կրթութեան մէջ միմիանց հետ վերաբերվումեն, ափսո՜ս, մենք գտնումենք, որ երկուսն ևս շատ դէպքերում շատ քիչ են միմեանց վերայ ուշք դարձնում։ Բայց պէ՞տք է արդեօք վերոյիշեալ բացատրութեան հիման վերայ զարմանալ, որ դաստիարակութեան հետևանքներն շատ անգամ կասկածաւոր բնաւորութիւն ունին, թէ՝ աճող երիտասարդութիւնն՝ մանաւանդ բարոյական յարաբերութեան մէջ, շատ բաներից թերի է լինում։ Ո՛չ, ընդհակառակն՝ զարմանալու բան չըկայ, եթէ մինչև անգամ շատ արգելքներ և խաղեր բարոյական կանոնի դէմ յառաջ գան, քան թէ այդ իրապէս տեղի կարողէր ունենալ։

Եթէ շատ անձինք մի որ և է գեղարուեստական գործ շինելով են զբաղուած, այն ժամանակ պարզ հասկանալի է, որ նոքա բոլորն ևս մի որոշ պարզ նախապէս գծուած ծրագրի համեմատ են շարժվում, և որքան նուրբ և նշանաւոր գործ լինի, այնքան ևս նոցա ձգտումն ճաշակի միութեան մէջ աւելի ճիշտ կլինի։ Բայց կա՞յ արդեօք իրականութեան մէջ մի որ և է գործ, որ մօտաւորապէս այնքան նշանաւոր լինի, ինչպէս մանուկի հոգու կազմակերպութիւնը։ Արդեօք մանուկների այդ գործունէութիւնից կախումն չունի՞ նրանց յառաջադիմութեան դիտենալու և կարենալու մէջ, նրանց ընտելացումն պարտաճանաչութեան և բարի սովորութիւններին, նրանց բարքի և բնաւորութեան կազմակերպութիւնը, գործնական վեհանքի համար գործունեայ և պիտանի անգամ լինելն, նոյնպէս և նրանց ձգտելն Աստուծոյ արքայութեան ետևից, որից մանուկների թէ ժամանակաւոր և թէ մշտնջենաւոր երջանկութիւնն էապէս կախումն ունի։

Ուրեմն այսպէս, դաստիարակութեան հետևանքը չէ պիտի վեր ի վերոյ ինդիր դառնայ, դորան գործ դնելուց առաջ պահանջվում է դիտենալ. իսկ սա

ևս պայմանաւորումէ, որ դաստիարակութեան նպատակին տանող բոլոր գործ դրած միջոցները ուղղակի դորան ուղղուած պիտի լինին և թէ նորա բոլոր կանոններն իրար հետ այնպէս համապատասխան և միմեանց հետ կապուած պիտի լինին ինչպէս մի շղթայի օղակները, կամ թէ ինչպէս գործարանաւոր ամբողջ մարմնի մասերն միմեանց հետ սերտ կապուած մի ամբողջութիւն են ներկայացնում։

Ընդանիքն ու ուսուցչութիւնը պիտի միանան հետ լիակատար ներդաշնակութեամբ ընթանան, նոյա պարտաւոր են մտքով և գործով իրար օգնել և մտքով յառաջ տանել, երբ որ ուշադրութեան պատճառ տալել։

Սակայն ընտանիքն ու ուսուցչութիւնն ի՞նչ բանի մէջ կարող են միմեանց օժանդակել։ Մի առաջնակարգ մանկավարժ մատենագիր «Լօքէն ասումէ» առողջ հոգի յառողջ մարմնի։ այդ խօսքով նա ուզումէ ցոյց տալ թէ ինչպէս մարդու մարմնական ընդունակութիւնն և ճարպիկութիւնն նշանաւոր դեր են խաղում նաև մտաւոր զարգացման համար։ Նրանից կախումն ունի մեծաւ մասամբ թէ արդեօք հոգին շարունակ գործունէութեան մէջ պահպանել է թէ նորան խնայել է հարկաւոր։

Ա՛յս պատճառով ուսուցիչը պարտաւոր է մանուկների առողջ գրութեան վերայ մեծ ուշք գարձնել, նա պէտքէ իմանայ թէ նրան յանձնուած աշակերտներն թոյլ թէ ամուր մարմնի կազմուածք ունին, արդեօք նորա ջղային գրութիւնը, չնայելով որ հիւանդութեան է ենթարկուած, կանոնաւոր է թէ չէ, արդեօք նորա տեսանելիքը, լսելիքը ևլն. առողջ են թէ չէ։ Իսկ եթէ ուսուցիչը այս տեսակ վիճակներին լաւ, հիմնապէս տեղեակ չէ, այն ժամանակ նա շատ հեշտութեամբ մանկան՝ զանցառութեան և յանցանքի համար կը պատժէ, որին իսկապէս մանուկը արժանի չէ, կամ թէ այնպէս պատժական միջոցներ է գործ դնում, որոնք ախտաբեր դէպքերին անհամապատասխան են։

Ինչպէս որ մարմնականի, նոյնպէս և հոգեկանի վերաբերմամբ նոյնը կարելի է ասել, եթէ որ գիւղատնտեսական գործով զբաղուողների համար հարկաւոր է որ երկրագործը իր ձեռքի տակ եղած հողի դրութիւնը իմանայ, թէ նա ինչ խառնուրդից է կազմուած, և ինչ արդիւնքի պիտի սպասէ, օրպէս զի ըստ այնմ ևս մշակի, ուստի և նոյնը ուսուցչի համար աշակերտների հոգեկան յատկութեան վերաբերմամբ աւելի մեծ չափով տեղի պիտի ունենայ։ Որպէս զի ուսուցիչը մանուկների հոգեկան զարգացման վերայ նպատակայարմար կերպով ներդործած լինի, պէտք է նախապէս իմանայ թէ մանուկի հոգեկան ոյժերը ինչ յատկութիւն ունին, արդեօք գրգիռ ընդունելու, ուժգնութեան և աշխուժութեան մէջ ինչպէս է, կարող է նա մի բան թեթև ընդունել և կամ դժուար, շատո՞վ է մի բան մոռանում թէ ուշ, մի ուրիշի մտքերի ընթացքին հեշտութեամբ է հետևում, թէ նորան մեծ դժուարութիւն է պատճառում։ Ուսուցիչը պիտի քաջ իմանայ, թէ աշակերտը ինչ ուղղութեամբ աւելի զարգացած է և ինչ ուղղութեամբ ոչ, ինչ յարաբերութեամբ նորա մտքի ոյժերը նորա հոգու կամքի զարգացման հետ

գանվումն, մանուկը ինչ տեսակ առարկաների համար մի առանձին հետաքրքրութիւն է ցոյց տալիս, ինչ տեսակ բնաւորութեան յատկութիւններ ունի, և ընդհակառակն ինչ վատ հակակրութիւններ և սովորութիւններ են նորա մէջ գտնվում։

Եթէ ուսուցիչը բոլոր այս հարցերին լաւ տեղեակ է, այն ժամանակ նա կարող է մանուկն անհատապէս կրթել և արդէն սկսուած զարդացման գործողութեան վերայ ներգործել։ Իսկ եթէ ընդհակառակն, մանուկի հոգեկան ներքինը մի անծանօթ երկիր է (terra incognita) ուսուցչի համար, և կամ երկար տարիներ դիտողութիւնն անելուց զկնի նորան այդ հոգեկան աշխարհը դարձեալ փակ է լինում, այն ժամանակ նա շատ սխալների է հանդիպում, որոնցից գուցէ լիովին կարելի էր խուսափել, եթէ որ մանուկի ծնողները ժամանակին իրանց մանուկի մասին հարկաւոր բացատրութիւններ և տեղեկութիւններ տային։

Այս պարծանով շատ ցանկալի կլիներ, որ ծնողքը իրանց զաւակներին ուսուցչներին յանձնելիս, նաև նրանց հոգեկան և մարմնական որպիսութիւն վերայ լիովին տեղեկութիւն տային։

Այստեղ նորա պէտք անեն, ինչպէս որ բժշկին դիմելիս իրանց զաւակի համար հիւանդութեան ամեն երևոյթները ասումեն, որովհետև հոգու առողջութիւնը նոյն չափով նշանաւոր է, ինչպէս մարմնինը։ Ծնողք պարտաւոր են նաև մինչև այդ ժամանակ իրանց արած սխալները կրթութեան միջոցին չը ծածկել, զի միայն այդպիսով կարելի է լինում այդ սխալ բունած ընթացքը հետզհետէ լաւացնել։ Նորա պարտաւոր են նաև իրանց տածած յոյսերը դէպի զաւակները և հոգացողութիւնը ուսուցչից չը ծածկել։ Իսկ ուսուցիչն ևս իր կողմից պարտաւորէ առանց աչառութեան մանկան սիրով և համբերութեամբ իր հովանաւորութեան տակ առնուլ։ Ծնողաց դատողութիւնները իրանց զաւակների մասին նա չըպիտի հաստատապէս ընդունէ, նա աւելի լաւ կանէ. որ իրեն հաղորդուած իրողութեանց և փորձառութեանց վերայ ուշք դարձնէ և յետոյ ինքն անձամբ քննէ և դիտէ, որպէս զի իւր համար մի սեպհական վճիռ կազմէ իրան ստանձնուած մանկան մասին։

Իւրաքանչիւր գործունէութիւն, որ մի որոշ բարոյական արժէք պիտի ունենայ, պէտք է գիտակցաբար որոշեալ նպատակին տանէ։ Եթէ որ ուզումինք որ դաստիարակութիւնը աւելի մեծ դեր կատարէ, քան թէ ըստ կամայց և տրամադրութեան մի արարք, այն ժամանակ դաստիարակիչը պարտաւոր է մի որոշ գաղափար (գերակայ) իւր մէջ ունենալ, որի իրագործմանը նորա բոլոր արարքը պիտի ձգտէ. իսկ թէ նա պարզ գիտակից չէ այն բանին, թէ նա իւր սանիկը ինչ նպատակին պիտի տանի, այն ժամանակ նորա արարքը նման կը լինի խաւարի մէջ խարխափելուն։

Բաւական չէ, որ ծնողքը և ուսուցիչք իրենց համար զատ զատ կրթութեան գերակայ ունենան աչքի առաջ, այլ նորա ի միասին պիտի ձգտեն մի և նոյն նպատակին, և հէնց այդպիսով ընտանիքի և ուսումնարանի գաս-

տիարակչական գործունէութիւնը փոխադարձաբար կը լրացուի և կը պահպանուի։ Հակառակ դէպքում՝ մի հաստատութիւն միւսին արգելք է լինում և այնուհետև ոչ մէկը նրանցից ձգտած նպատակին չէ հասնում։

Արդեօք հետևո՞ւմն երկուսն էլ իրապէս միշտ մի և նոյն նպատակին թէ ոչ։ Ա՞խ, որքան յաճախ է պատահում, որ ծնողքը մանուկի ենթարկութիւնն ու ձգտումն զանազան զուարճութեանց և վայելչութեանց ետևից հետզհետէ աճեցնումն, մինչդեռ նա ժուժկալութեան, անձնուրացութեան, ինքնաիշխանութեան, իւր բաղձանքները ճնշելու մէջ պիտի վարժուի։ Քանի քանի ծնողք աչքի առջև ունին իրանց մանկանց դաստիարակութեան միջոցին բացառապէս օգտակարութեան սկզբունքն, այն է գործնական կեանքի համար պիտանիութիւն, մի և նոյն ժամանակ առանց զարթեցնելու և խնամելու նրանց մէջ սէր և հակումն կեանքի բարձրագոյն շահերի (Interess) համար։ Այժմեան ժամանակում մի անհրաժեշտ բան է ճանաչուած մանկանց խելքը կրթել, սակայն շատերը անուշադիր են թողնում՝ որ խելքը (խոհականութիւն) միշտ առելութեան, կապտութեան, եսականութեան և նիւթական շահերի հետ է կապուած, և շատ անգամ էս ի վնաս հասարակութեան, զանազան յանցանքի առիթ է լինում, եթէ նա մնրձաւորներ սիրելու, սրտի աղնուութեան և բարութեան, հաստատ պարտաղդացութեան և բարոյական լրջութեան հետ կապուած չէ։ Շատ անգամ հարստութեանն, փառքին և պատուին ձգտելով, անուշադիր են թողնում, որ հոգու խաղաղութիւնն աւելի մեծ արժէք ունի քան թէ բոլոր երկրային բարիքները ի միասին հաւաքած, իսկ այդ խաղաղութիւնն միմիայն Աստուծու հետ հաշտուած և ի ներքուստ կապուած սրտի մէջ է տեղի ունենում։

Ամենից առաջ ուսումնարանը պիտի զգուշանայ այդ տեսակ վտանգներից և փորձանքներից։ Նորա ձգտած նպատակը ոչ այլ ինչ պիտի լինի, եթէ ոչ իրանց սանիկներին այնպիսի ներդաշնակ կրթութիւն տալ, որ ապագայում նրանցից կրօնական, բարոյական անձնաւորութիւններ դառնան։ Եւ որովհետև դաստիարակութիւնն մինչև մարդու կեանքի վերջը շարունակվում է, ըստ որում իւրաքանչիւր հասակաւոր ըստ ինքեան իւր անձի դաստիարակ պիտի լինի, ուստի ուսումնարանը պիտի աշխատի աշակերտներին ընդունակ դարձնելու, որ նորա իրանց դաստիարակն և միշտ Աստուծու դաստիարակութեան տակ լինին։ Ուսումնարանը այդ նպատակին միայն այն ժամանակ կը հասնի, եթէ նա իւր ձգտման մէջ ընտանիքից ուղիղ կերպով նեցուկ և պաշտպան է ստանում։ Բայց ծնողք և ուսուցիչք շատ անգամ իրանց դաստիարակչական գործունէութեան հետևանքներից անբաւարար են լինում, յաւաչ է գալիս նորանից, որ նորա երկուսն էլ բոլորովին զանազան նպատակի են ձգտում։

Դորանից հետևում է որ ուսումնարանն և ընտանիքը պէտք է իրանց ընդհանուր գործունէութեան նպատակը լաւ հասկանան։ Դուք նաև ջերմեռանդ պարզ պիտի խնամեն, ըէ նրանցից երբեմն ինչ խնդիր է ընդհանուր կատարելու։

Մարմնի խնամատարութիւնն նաև ուսման միջոցին առաւելապէս ընտա-

Նիքի խնդիրն է դաստիա՝ նա պէտք է հոգայ կարևոր սննդի և նպատակայարմար հագուստի, առողջ օդի և ըստ կարի մաքրութեան, հանգստութեան և շարժողութեան մէջ ճիշտ յարաբերութիւններ պահպանելու համար. իսկ ուսումնարանն ևս պիտի ընտանիքի նեցուկ լինի իւր կողմից. նա մանաւանդ պիտի աշխատի, ա) աշակերտաց աչքերը խնամել՝ հոգս տանելով յարմարաւոր լուսաւորութեան մասին, բ) ողնաշարը և թոքերն անվնաս պահելու համար, պիտի յարմար նստարաններ ձեռք բերէ, նոյնպէս և դասարաններում մարմինը ուղիղ պահելու և մաքուր օդ ունենալու մասին հոգս տանէ, գ) ջղային դրութիւնն և ուղեղը չբեռնասել, մանուկներին չափազանց մտաւոր աշխատութիւն տալով։

Ուսումնարանը կարող է մանուկների առողջութիւնն, թարմութիւնն, զուարթութիւնն և կենդանութիւնն նաև ուղղակի ճանապարհով պահպանել հաղմակերպելով նպատակայարմար խաղեր և աւանդելով մարմնամարզական կանոնաւոր դասեր։

Աշակերտաց կարևոր ծանօթութիւններ տալը հոգեկան ոյժեր կրթելն և նրանց մէջ յառաջացնել ձգտումն աւելի ևս կրթուելու և յառաջադիմելու համար՝ այդ բոլորը ընկնում է գլխաւորապէս ուսումնարանին, որովհետև այդ կէտում նորա գործունէութիւնն ամենաշատ դէպքերում ընտանիքից անցնում է։ Մինչդեռ ծնողք շատ բացառական դէպքերում յարմարութիւն ունին տան մէջ իրանց զաւակներին կանոնաւոր ուսուցում տալ, ուսումնարանում այդ կոչման համար մասնաւորապէս պատրաստուած ուսուցիչը հոգեբանութեան և մանկավարժութեան պահանջներին համապատասխան ուսուցումն է աւանդում։ Մինչև անգամ եթէ ընտանիքը իւր մանուկների համար տնային ուսուցիչ վարձել կամենայ, այնու ամենայնիւ ուսումնարանը նորան միշտ օգտակար կարող է լինել, քանի որ նա դաստիարակութեան նպատակին յարմար միջոցներ ձեռքն ունի, այսինքն, զարթեցնել ցանկութիւն և ուրախութիւն հանրական աշխատութեան համար և յառաջ կոչել մի ազնիւ նախանձ և մրցումն ընկերակիցների մէջ. ուստի ընտանիքը հեռի լինելով այդ տեսակ յարմարութիւններից, ուսումնարանը եթէ այդ ըստ կարգին գործ դնէ, կարող է մեծ ազդեցութիւն ունենալ օչ թէ միմիայն ծանօթութիւն հարստացնելու, այլև բարքի կրթութեան վերայ, հետևաբար ընտանիքը պարտաւոր է ուսումնարանին անպայման նախամեծարութիւն տալ ուսուցման և նորա ներդործութեան վերաբերմամբ մանկական հոգու վերայ, իսկ ինքն իր պարտքը չբմռնայ, որ նա գործակից և նեցուկ պիտի լինի ուսումնարանին։ Այդ պատճառով ծնողները պիտի հոգս տանեն իրանց զաւակների կանոնաւոր կերպով ուսումնարան գնալու մասին և բնաւ չերթայլ տալ՝ որ նորա առանց մի հիմնական պատճառի կամ առանց ուսուցչի թոյլտուութեան դասից հետ ընկնեն, նորա իրանց զաւակներին հարկաւոր ուսումնարանական պիտոյքներ, նորա ուսումնարանական աշխատանք պատրաստելու համար պահանջուած ժամանակը պիտի տան և մանուկների վերայ հսկողութիւն պիտի ու-

նենան, որ նոքա այդ բանը, որչափ հնարաւոր է ինքնուրոյն, ուսումնարանի տուած կանոնների համաձայն կատարեն։ Բացի սրանից ընտանիքը պիտի հոգայ նաև որ մանուկները ուշադրութեամբ իրանց ամբողջ շրջակայքը, բնութիւնը և մարդկանց կեանքը նկատել սովորեն և ամեն տեսած և մտածած բան ուղիղ, պարզ և մէկին պատասխանեն։ Ծնողք պարտաւոր են տան մէջ մանուկների զբօսանքի և ճանապարհորդութեան մասին հոգս տանել և նրանց մտաւոր հորիզոնը ընդարձակել իրանց ստացած դիտողութիւնները և հասկացողութիւնները պարզելով։

Ուսումնարանն ևս իւր կողմից պարտաւոր է ըստ կարի ուշք դարձնել ընտանիքի վերայ. նա դասարանական աշխատութիւն այնքան շատ չըպիտի տայ, որ աշակերտի ազատ ժամանակը չսահմանափակուի, այլ հարկաւոր է որ մարմնական և հոգեկան հանգստութեան համար ևս աւելորդ ժամանակ թողնէ, ինչպէս և ընտանեկան կեանքի պահանջները կատարելու վերաբերմամբ։

Եթէ բացի ուսումնարանական դասերից նաև մասնաւոր դասեր ևս պէտք են, այն ժամանակ ծնողքը շատ լաւ կանեն որ այդ մասին ուսուցչին հաղորդեն, որպէս զի թէ ուսումնարանի ուսուցումը և թէ մասնաւորը ներդաշնակութեան մէջ գտնուին։ Այդ տեսակ համաձայնութիւն պիտի կայանայ նաև մասնաւոր ընթերցանութեան վերաբերմամբ, որպէս զի թէ ընթերցանելի կտորների ընտրութիւնն և թէ դորա վերաբերմամբ գործադրուելիք ժամանակի մասին անյարմարութիւններ յառաջ չըգան։ Եթէ մասնաւոր դասեր և մասնաւոր ընթերցանութիւն շատ սերտ յարաբերութեան և համաձայնութեան մէջ չեն ուսումնարանի ուսուցման հետ, այն ժամանակ նոքա աշակերտների վերայ վնասակար ազդեցութիւն կունենան և նորանց հոգեկան ոյժը բոլորովին կըջլատեն։

Սրտի և կամքի կրթութեան համար պէտք է երկուսն ևս, թէ՛ ուսումնարանը և թէ՛ ընտանիքը առաջնակարգ դեր խաղան։ Ինչպէս որ մենք առաջուց տեսանք, ընտանիքը դորա նկատմամբ կարող է կանոնաւոր հանգամանքների և յարաբերութեանց տակ բազմակողմանի ազդեցութիւն ունենալ մանուկ սերընդի զարգացման վերայ. նա դաստիարակութեան գրեթէ ամեն միջոցները ձեռքին ունի — հեղինակութիւն և սէր, խօսք և օրինակ, հակումն և պարապեցնել, խրատ և զգուշութիւն, գովասանք, նախատինք և պատիժ, որոց նա ամենագործունեայ կերպով գործադրել կարող է։ Իսկ ուսումնարանը կարող է ընտանիքին գրեթէ այդ բոլոր կտորներում նոյնուկ դառնալ, այո՛, նորա ազդեցութիւնն մի քանի յարաբերութեանց մէջ միևնոյն անգամ ընտանիքից էլ աւելի է։

Թէև մանուկների յարաբերութիւնը ծնողների, քոյրերի, եղբայրների, ազգականների, ծառաների հետ մեծ նշանակութիւն ունի նոցա բարքի զարգացման համար, այնու ամենայնիւ այդ բանը բաւական չէ, որ կարողանայ մանկան մէջ ինքնուրոյն կոչ և դորան համապատասխան պարտք յառաջ բերել։ Իսկ ընդհակառակն ուսումնարանում, ուր նա աւելի է հարկա-

դրուած իրան օգնել, քան թէ տան մէջ, նա մանաւանդ որ ուսումնարա-
նում միշտ իւր ընկերակիցների հետ յարաբերութեան մէջ գտնուելով
կաշխատէ միշտ նորանց յարմարուել, պէտք եղած միջոցին իրան պաշտպա-
նել և կամ նրանց հետ միանալ ևլն. և ահա այդպիսով մեր հասարակա-
կան կեանքը աւելի դաստիարակող կարող է լինել քան թէ ընտանիքը։
Ուսումնարանին յատուկ եղած միջոցներն շատ մեծ ազդեցութիւն ունին
աշակերտների կեանքի վերայ, թէ ինչպէս նորա իրանց յարաբերութիւն-
ները թէ միւս անհատների և թէ ամբողջութեան հետ, որը անդամներ
ինքեանք ևս պիտի ունենան։ Ուսումնարանի միասնական կեանքը նորա
մէջ կազմակերպումէ բարի մտքեր և ձգտումներ ոչ թէ միայն մանաւոր
անձինքների, այլ նաև ամբողջ հասարակութեան վերաբերմամբ։ Այն յար-
գանքը, որ մարդ օրէնքի և կարգերի առջև ունի և այն ուրախութիւնն, որ
մարդ ստանումէ իւր խելացի նպատակներին հասնելու միջոցին, յառաջա-
նումէ շատ անգամ ուսումնարանական ժամանակից և դորա ինչ տեսակ
լինելն կախուած է միասնական կեանքի խնամատարութիւնից։

(Շարունակելի). (Թարգմ.) Ս. Տ. Գարրիէլեան.

ԳԻՒՂԱՑՈՒ ԲՈՂՈՔԸ.

Կան՝ որ ասում են՝ անհոգ, անգործ ես,
Ամբողջ ձմեռը պարապմունք չունես.
Նաղլով ես անցնում բոլոր օրերդ,
Թափած ես թողնում ամեն գործերդ.
Գիւղացի՛ անհոգ,
Մարդ՝ անուամբ ես լոկ։
— Ամբողջ ամառը այրվում եմ տանջվում՝
Քարի հետ քաղվում եմ, հողի հետ մաղվում.
Անցնումեմ օրերս քաղցած ու ծարաւ,
Գիշեր ու ցերեկ հանգիստ չեմ քնաւ.
Ասացէ՛ք խնդրեմ,
Իրաւ, անհո՞գ եմ։
Հագուստս գձուծ՝ ոտքերս բորիկ,
Տանջվում եմ սաստիկ լռիկ ու մնջիկ.
Դառն քրտանց մէջ լողում եմ մարմնով,
Երկիր եմ հերկում՝ փոշում խեղդուելով.
Ասացէ՛ք խնդրեմ,
Դարձեալ անհո՞գ եմ։

Անցնում էի ամիս՝ կողինք չեմ մտնում,
Եւ ո՛չ մի րոպէ հանգիստ չեմ քնում.
Քար է ծառայում փափուկ բարձիս տեղ,
Որտեղ մթնում էի՝ քնում եմ այնտեղ.
Ասացէք խնդրեմ,
Էլի անհո՞գ եմ։

Բոկոտն եմ շրջել շատ մութ գիշերներ,
Շեռք ոտս ծակել են տատասկ ու փշեր.
Կին, որդիք մոռցած, կեանքից ձեռք քաշած՝
Սողնոց ու բուռց ընկեր եմ եղած.
Այսպէս տանջվում եմ,
Նորից անհո՛գ եմ։

Շմեռն էլ նոյնպէս անգործ չեմ մնում,
Սայլ ու գութանիս կոտրածն եմ շինում.
Խնամարկումեմ քաջ լծկաններս,
Ուրախացնում եմ կին ու որդիքս.
Ասացէք խնդրեմ,
Դեռ ևս անհո՞գ եմ։

Խեղճ կինս ու աղջիկս ազատ չեն գործից,
Թէշին ու ջահրէն չեն թողնում ձեռքից.
Նոքա մանում են, թելեր պատրաստում,
Ես էլ հորի մէջ՝ կտաւ եմ գործում.
Լինում են օրեր, որ քէֆ եմ անում,
Ընկճուած մարմինս նորից կազդուրում.
Այդ կարճ հանգիստը
Շատ են համարում։

Գրաշար Ներսէս Տ. Աւետիքեանց.

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Հ Ա. Շ Ի Ւ

Ել և մուից եկեղեցական-ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանաց Հայոց Նոր Բայազիտ քաղաքի վասն 188⁶/₇ ուսումնական ամի:

Հաշիւ դրամագլխի.

Մինչ ց 27 Յունիսի տարւոյս դրամագլխի գումարն էր 2900 ր. Յունիսի 27 ին ստացուեց Հանգուցեալ Յակոբջան Դայեանցի յիշատակին նուիրած ի հաշիւ դրամագլխի 40 ր. ընդամենը երկու հազար ինն հարիւր քառասուն րուբլի, որը տուած է մուրհակագրերով հետևեալ անձանց շահեցնելու համար, Պ. Պ. Յակոբ Սարգիւլեանցին, Յակոբ Միկիտան Կարօեանցին, Յակոբ Մանուկեան Զատիկեանցին, Պօղոս Յոկոլակեանցին, Առաքել Ենգիբարեանցին, Սահակ Ափրիկեանցին, Յարութիւն Թումունջեանցին, Առաքել Սիմոն—Աղայեանցին, Ղարիբ Բուռնուքճեանցին. Մարգար Արևշատեանցին, Տիգրան Մ. Կարապետեանցին, Սայադ Ատոմեանցին, Գէորգ Քոչարեանցին, Յարութիւն Արևշատեանցին, Աղաջան Մալաքեանցին, Զոհրաբ Դօվլաթեանցին, Միքայէլ Ղլիջեանցին և Աւետիս Բաղդասարեանցին, իւրաքանչիւրին մէկ հարիւրական րուբլի, Սերովբ Ափրիկեանցին 262 րուբլի, Մանուկ և Զոհրաբ Նալբանդեանցներին 500 ր. Մաթէոս Ափրիկեանցին 328 ր. և Յարութիւն Մաժիկոնեանցին 50 ր.

Գումարաւ 2940 ր.

Մ Ո Ւ Տ Ք.

		Ր.	Կ.
	Սկսեալ 1886 թ. Օգոստոսի 21-ից մինչև 1887 թ. Յուլ. 14-ն		
1.	Նախկին Հոգաբարձութիւնից պատրաստի դրամ	299	45
2.	151 երկսեռ աշակերտների թոշակը	386	
3.	445 պսակների արդիւնքը	398	48
4.	Մոմավաճառութեան կապալագրամը ց 1 Ապրելի	511	50
5.	Ինն կրպակների վարձը	201	70
6.	Ս. Աստուածածին եկեղեցու մասանց տան արդիւնքը	74	10
7.	Դրամագլխի տոկոսիքը	301	
8.	Փոստատան կառավարիչ Պետրոսեանից նուէր	8	
9.	Թատրոնի բեմի վարձ և մանր մունք	17	
		2197	23

Ծ Ա Խ Ք.

	Սկսեալ 1886 թ. Օգոստ. 21-ից մինչև 1887 թ. Յուլիսի 14-ն.	
1.	4 Ուսուցչի 1 վարժուհու ռոճիկը և վերակացուհի Աղիղեանցին նուիրած ապարանջանի դինը	1160

2·	վաճելիքի	31	15
3·	Ուսումնարանապատկան 11 կրպակի Հարկը քաղաքին .	19	50
4·	Հարկաւոր թղթերի տպագրութեան վարձ . . .	24	62
5·	Զքաւոր տղակերտներին դասագրքեր և ձեռնարկներ .	15	5
6·	Ձեռագործի նիւթեղէնք	39	51
7·	Ուսումնարանի երկու ծառաներին	109	
8·	Վարձ տուաւ տղայոց դպրոցի համար և վարժուհու տներին·	40	15
9·	Շինութեան կարկատան, կնիք և մանրածախք եղև . .	76	10
10·	№ 11 կրպակի վրայ ծախք	32	10
11·	Տղայոց ուսումնարանի շինութեան վերայ ծախսուեց .	511	31
		2058	49

Ա Պ Ա Ր Ի Կ.

	Որը գրուած է մուտք, բայց դեռ չէ ստացուած գումարաւ .	50	14
77	հատ վաճառելի գրքեր վաղուցուանից մնացած . .	59	50
		109	64

Ա Պ Ա Ր Ի Կ.

Որը պէտք է ստացուի և մուտք գրուած չէ·

1· Դրամագլխի տոկոսներից·

1·	Յակոբ Միկիտան Կարօեանցի մնաց	22	50
2·	Յակոբ Սարնգիւլեանցի	7	50
3·	Առաքել Սիմոն—Աղայեանցի	22	50
4·	Տիգրան Մ. Կարապետեանցի	22	50
5·	Մարգար Արևշատեանցի	7	50
6·	Սահակ Ափրիկեանցի	22	50
7·	Ղարիբ Բուռնուքչեանցի	22	50
8·	Աղաջան Մալաքեանցի	22	50
9·	Զոհրաբ Դովլաթեանցի	15	
		165	

2· Երկու կրպակների վարձը·

1·	Պօղոս Աւետիսեանցի մնաց	13	70
2·	Թալլաք Սարգիս Շահինեանցի	14	70
		28	40
3·	Մեսրովբ Տէր Յովանէսեանցը	40	
		233	40

Անդամ Հոգաբարձութեան Ս. ԲԱՏԻԿԵԱՆ

ԱՅԼ ԵԻ ԱՅԼՔ

—

Շնորհակալութեամբ ստացանք.

Ա. «Празднованіе пятидесятилѣтняго юбелея ученo—педагогической дѣятельности Н. О. Эмина—*Հանդէս յիսնամեայ յօբելէնի գիտնական և մանկավարժական գործունէութիւն Մկրտչի Էմին. 1836—1886.*» *խմբագրութեամբ Գ. Խալաթեանց. տպեալ ի Մոսկվա 1887.*

Գիրքը բաղկացած է 92 երեսից, թուղթը և տպագրութիւնը գեղեցիկ են. գրքի բովանդակութիւն կազմուածն յօբելեանի կազմող ժողովի մի ճառի ռուսերէն և հայերէն թարգմանութիւնները և այն շնորհաւորական գրութիւնները, ուղերձներն ու շնորհաւորական հեռագրները, որ Պ. Մ, Էմինի յօբելեանի առիթով նորա յարգողները ուղղել են նորան. Ուղերձների և շնորհաւորական գրութեանց սկիզբը գրուած է Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակը որով նորին Վեհափառութիւնը շնորհաւորելով Պ. Էմինի յօբելեանը օրհնում է նորա բազմամեայ վաստակաւոր կենաց արգասիքը.

Գիրքը խմբագրուած է ռուսերէն, բայց գրութիւնները տպագրուած են բնագրին համեմատ ինչ լեզուով որ եղել են. Վերջում գրուածը Պ. Էմինի երկասիրութեանց ցուցակը, որ թուով 34 հատ են.

—

Բ. «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի». բ. տպագրութիւն. հրատարակել է Պ. Կարապետ Եզեան. Պ. Եզեան ընդարձակ յառաջաբանում ամփոփելով գրքի բովանդակութիւնը՝ համառօտ քննական հայեացք է ձգում մահմետական կրօնի ու տիրապետութեան սկզբնաւորութեան վերայ. գրքի վերջում գրուած են ծանօթութիւններ, որոնք պարզաբանում են պատմութեան ինչ ինչ կէտերը. Գիրքը տպուած է հանգուցեալ Գ. Իզմիրեանցի կտակով գրքերի հրատարակութեան յատկացեալ դրամից հաշվում և արդիւնքը թողուած է Թիֆլիզի գրքերի հրատարակութեան ընկերութեան.

Վերջին տարիներում Պ. Կ. Եզեանի հրատարակութեանց այս երրորդ գիրքն է, իսկ առաջինքն են Լեհաստանի Հայք և Ստեփաննոս Ասողիկ. Երեքն էլ իրանց բազմահմուտ յառաջաբանով և ծանօթութիւններով՝ արժանի են մեծահամբաւ հրատարակչի անուանը.

Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի վաճառվում է Թիֆլիզի կենդրոնական գրավաճառանոցում.

—

Գ. «Գէորգ Ստեֆենսօն. գործ Վ. Օ. Գոլնի թարգմանեց ռուսերէնից Միրզայ Տէր Սարգսեան. տպուած է Շուշւոյ Հայոց Հոգևոր տեսչութեան տպարանում 1887 գինն է 20 կոպէկ.

Ի բաց առեալ մի քանի անհարթութիւնները որ յատուկ են թարգմանութեանց՝ բաւական մաքուր լեզուով է թարգմանուած.

Գիրքը վաճառվում է Շուշում Դաւեան եղբայրների գրավաճառանոցում

և Թարգմանչի մօտ. Հասցէն. Въ Г. Шушу, книжный магазинъ бр. Дадіанъ кам թէ Мирзѣ Теръ—Сарксянцъ.

—

Դ. «Ողջախոհութիւն ուղիղ ճանապարհ աճելութեան», գրեց Կիւրեղ վարդապետ Սրապեանց. տպած է Թիֆլիզ Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարանում 1887 թ. գինն է մի րուբլի քսան կոպէկ.

Գիրքը բաղկացած է բացի վրիպակների և գլխակարգութեան ցանկից՝ 353 երեսից. Հեղինակի նպատակն է դատապարտել մոլութիւնը որ ուտիչն է մարդկային կեանքի և աճելութեան, քաջալերել ողջախոհութիւնը, որ պարարում է մարդու կեանքը և պատճառ է դառնում բեղմնաւոր աճելութեան. իւր այս նպատակին հասնելու համար հայր հեղինակը Սուրբ Գիրքն և ժողովրդեան փորձառութեան արգիւնքը նիւթ առնելով՝ քարոզում է իւր սկզբունքները։—

—

Ե. Ս. Պ. Բուրգում հրատարակուած։ Ուրիշի գերեզմանի վերայ առանց արտասուքի են լաց լինում. գինն է 5 կ. թ. 2, «Բուլղար աւազակապետ» 5 կ. թ. 3, «Ծաննա տ'Արքը գաղղիայի ազատօղը» 3 կոպէկ. թ. 4. «Ներքա տատիս պատմածը» 5 կոպ։ Բացի Ծաննա տ'Արքից որ գրած է տաճկաստանի բարբառով, մնացեալները արարատեան բարբառով և թեթև ու դիւրըմբռնելի ոճով են գրուած. տպագրութիւն և թուղթը լաւ են և գները շատ արժան։ Գովում ենք հրատարակիչների եռանդը սոյն օրինակ մատենիկներով հայ ժողովրդի ընթերցանելի գրքերը բազմացնելուն համար. յաջողութիւն ենք ցանկանում։

—

Զ. «Սալիանից Էջմիածին, նկարագիր ուխտաւոր ուղևորութեան». գործ բժիշկ Միսաք Արամեանց։ Տպուած է Թիֆլիս Մ. Ռօտինեանցի տպարանում 165 երեսից բաղկացած, գինն է 50 կոպէկ։

Գրքոյկը փոփոխութիւններով արտատպած է «Նոր—Դար» լրագրից։ Հեղինակը թէ և իրաւունք ունի իւր երկասիրութեան ճակատին դնել քաղցրաբան Եղիշէի «այլ ես ինքնին ի տեղւոջն պատահեցի և տեսի» բայց այդ տեսութիւնը շատ հարևանցի է եղել որով և շատ անգամ ի կարծ ընդոստուցեալ՝ և ի լուր զարթուցեալ, ում կամեցել՝ գովել ներբողել է, ում կամեցել՝ վատաբանել և հեգնել է։ Սրատես և ուշիմ ճանապարհորդը իւր ուղեգրութեան մէջ է առել անխտիր իւր բոլոր տեսածն ու լսածը՝ և իրան պատահած բոլոր դէպքերը, առանց մանրամասնաբար ուսումնասիրելու և տեղեկանալու իսկութեան. և այսպէս շատ անգամ հակասութեան մէջ է ընկնում։ Մարդ գիրքը կարդալիս կարծում է հեղինակին և՛ բանաստեղծ, և՛ վէպասան և՛ հնոլոգ և՛ պատմաբան և՛ ասելաբ և՛ լրագրող և՛ կենսագէտ։ Եւ որովհետև գիրքը իւր մէջ բովանդակում է այսպիսի յատկութիւններ, որչափ և այդ յատկութիւնները անորոշ լինէին՝ այնու ամենայնիւ նպաստում են անձանձրոյթ ընթերցանութեան։

Պ. Արամեանց զարգարուն և ճոխ ոճով է գրում. խրթնութիւններ, օտար

լեզուների ազդեցութիւն հաղիւ է նշմարվում նորա գրութեան մէջ։ Եթէ Պ. Արամեան չըշտապէր իւր տպաւորութիւնները իսկոյն հրատարակել, այլ մշակէր որքան կարելի է, աւելորդութիւնները յապաւելով իսկ պակասները լրացնելով, շատ աւելի արժէք կունենար իւր վաստակը։

Կարդալով Պ. Արամեանցի յօդուածները մարդ զարմանում հայ կեանքի մասին նորա բազմակողմանի տեղեկութեանց համար. մի մարդ, յատուկ ծառայութեամբ և ընտանիքով բեռնաւորած ո՛րպիսի սէր և հետաքրքրութիւն պէտք է ունենայ շրջմարանելու այնքան բազմակողմանի տեղեկութիւնները և ո՛րպիսի յիշողութիւն՝ մտքում պահելու այնպիսի մանրամասնութիւններ՝ որոնք վաղուց արդէն մոռացած էին։

Պ. Արամեանցին, որ օժտուած է այդ գեղեցիկ ձիրքերով՝ ցանկանում ենք կատարեալ յաջողութիւն։

—

Է. «Երեխաները և նոցա բարեկամները» գործ Օրիորդ Սիւզան Կօրնա. թարգմանեց Գրանսերէնից Գ. Կաֆեան. տպուած է Թիֆլիզ Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարանում. թուղթը լաւ, տիպը մաքուր և 196 երեսից բաղկացած մի միջակ գիրք է. գինն 50 կոպէկ. Աղբիւրի բաժանորդների համար 40 կոպէկ։ Գրքի լեզուն զերծ լինելով օտարոտի դարձուածներից՝ մատչելի է ու իւր նպատակին պատշաճ։

—

Ը. «Զինուորական կանոնագրութիւն Կովկասի համար» գինն է 30 կոպէկ. կազմեց Խ. Մալումեան։

Գրքի նպատակն է զինուորագրութեան անհմուտ կովկասեցի հայերին, մատչելի կացուցանել զինուորագրութեան վերաբերեալ կանոնները, որպէս զի նոքա միջոց ունենան զինուորագրութեան մասին իրանց պարտքն ու իրաւունքը ճանաչել։ Եւ որովհետև Պ. Խ. Մալումեան բաւական ժամանակ է որ երևումէ հայ գրական ասպարիզում՝ ուրեմն և իրրև վարժ ոք հասկանալի և մատչելի լեզուով է թարգմանել զինուորագրութեան վերաբերեալ կանոնները։ Գիրքը վաճառվումէ Թիֆլիզում՝ Կենտրօնական և ուրիշ գրավաճառանոցներում՝ Երևանում՝ Պ. Կ. Դադամեանցի, Բագուում՝ Պ. Շիրազեանցի և Գանձակում՝ Պ. Ադայեանի խանութներում։ Այլ քաղաքացիք այդ գիրքը ստանալու համար պէտք դիմեն աշխատասիրողին՝ հետևեալ հասցէով. Тифлисъ Г. Х, Малумянцу, въ редакцію «Мшакъ».

ՊԱՏՉՏՈՒՆԱԿԱՆՔ·

(ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ)·

ՎԱՐՉԱԿԱՆՔ·

—

15 Ապրելի· Սինօդը ծննդական վկայականների գործը դիւրացնելու համար ըստ կոնդակի Վեհափառ Կաթուղիկոսի № 178 ի 11ն Ապրելի տարւոյս, որոշեց թոյլ տալ ըստ օրինակի Ղարաբաղու և Տփխիսոյ հայ կոնսիստորիանների Երևանայ կոնսիստորիային ևս ծննդական վկայականների սահմանեալ տուրքից տարեկան 500 րուբլով մի գործավար ևս աւելացնել։

—

29 Մայիսի· Սինօդը Աստրախանի Կոնսիստորիայի անդամ Թադէոս ւաւագ քահանայ Բունեաթեանի յայտարարութեամբ ստանալով Ղևլարեցի Գէորգ Յակովբեան Սայադեանից ի նպաստ ճեմարանի Մայր Աթոռոյս՝ տարւոյս համար 10 րուբլի, որոշեց պատուիրել գանձապահին յիշեալ դրամը գրել Աթոռային արդեանց տումարում, և տեղեկութիւն տալ նուիրատուին։

—

29 Մայիսի· Սինօդը Մուսուլի պատրիարքական տեղակալի յանուն Վեհափառ Կաթուղիկոսի գրութեան համեմատ որոշեց Արարատ ամսագրում հրատարակել և շրջաբերական հրամանով պատուիրել Կոնսիստորիաններին որ իրանց ստորադրեալ Հոգևոր կառավարութեանց և գործակալների միջոցաւ որոնեն Ալքօշցի ծերունի Սահակ անձն և հետևանքի մասին յայտնեն Սինօդին։

—

27 Մայիսի· Մարգարէ Տ. Ոսկանեանց ի նպաստ վերաշինութեան Մայր Տաճարի մատուցած լինելով Վեհափառ Հայրապետին մի հարիւր րուբլի, նորին Վեհափառութիւնն յանձնել է Սինօդին ուստի և Սինօդը որոշեց պատուիրել գանձապահին յիշեալ դրամը գրել Աթոռային արդեանց տումարում։

—

27 Մայիսի· Սինօդը ստանալով Դաւիթ աւագ քահանայ Եարալևանից 10 րուբլի յօգուտ ճեմարանի Մայր Աթոռոյ, որոշեց պատուիրել գանձապահին յիշեալ դրամը գրել աթոռային արդեանց տումարում և տեղեկութիւն տալ նուիրատուին։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ.

—

13 Մարտի. Սինօդը որոշեց պատուիրել Երևանայ Կոնսիստորիային—Շարուրայ երբեմն գործակալ Եղիշէ քահանայ Թարվէրդիանին, որ յանդգնելէր գանահարել Ալաքլուեցի Պետրոս քահանային՝ անորոշ ժամանակով դադարացնել քահանայագործութիւնից, ժողովուրդը յանձնել այլ քահանայի կարգադրելով՝ որ արդիւնքը երեք մասն բաժանուի, մի մասը՝ ի նուաստ արգելեալ քահանայի ընտանեաց, մի մասը՝ հովուող քահանային, իսկ միւս մասը ի նպաստ Երևանայ թեմի հոգևորականների որդոց և այրեաց։

—

13 Մարտի. Սինօդը Թիֆլիսի Կոնսիստորիայից իմանալով որ Ալէքսանդրապօլի վիճակի Մեծ—Քէմի գիւղացի Նահապետ քահանայ Խոշնազարեանց Թիֆլիզի թեմն եղող Ախալքալաքայ գաւառից պակ է կատարել խարդախութեամբ հրամանն ձեռք բերելով, վճռեց, յանցաւորին ենթարկել վեց ամսեայ ապաշխարութեան եկեղեցւոյ դրանը Սաղմոս ի ձեռին տքնելով. և կարգադրեց պատժադարտ քահանայի ծուխերը յանձնել այլ քահանայի, արդիւնքը երեք հաւասար մասն բաժանել արգելեալ քահանայի, հովուող քահանայի, և Երևանայ թեմի հոգևորականաց որդոց և արեաց գանձանակի մէջ։

—

16 Մարտի. Սինօդը վաւերացրեց Տփղիսու Կոնսիստորիայի վճիռը, որով Տաւիի թաղի Շմաւոն քահանայ Տէր Աստուածատուրեանցը ենթարկվում է եկեղեցական վեց ամսեայ ապաշխարութեան Սանահնոյ վանքում՝ Հոգ. իշխանութեան տնօրէնութեամբ յիշեալ քահանայի ծուխը պէտք է յանձնուի մի ուրիշ քահանայի որ ստացած արդիւնքի մի մասը յանձնէ յիշեալ քահանայի ընտանեաց իսկ մի մասն ինքն վեր առնէ ի վարձ աշխատութեան։

—

23 Մարտի. Սինօդը վաւերացրեց Ղարաքաղու Կոնսիստորիայի վճիռը, որով Նոյն թեմի Դաշլաղ գիւղացի Մկրտիչ քահանայ Տէր Յովհաննիսեանը ենթարկվում է պատժի իսպառ դադարելով քահանայագործութիւնից իւր ապացուցեալ գայթակղական վարուց համար, այլ և, որոշեց յիշեալ քահանայի ծուխը յանձնել ուրիշ քահանայի ի հովանութիւն, արդիւնքի մի մասը հովուողին ի վարձ աշխատանաց, մի մասը՝ ի նուաստ արգելեալ քահանայի ընտանեաց իսկ միւս մասը՝ յօգուտ գանձարանի որդոց և այրեաց հոգևորականաց Շուշւոյ թեմի։

—

22 Ապրելի. Սինօդը ըստ մակագրութեան Վեհափառ Կաթուղիկոսի որոշեց պատուիրել Վրաստանի Հայոց Վիճակաւոր Առաջնորդին վերադարձնել Սարգիս քահանայ Աղաջանեանին նորա պատուանշանները թոյլ տալով կրել աւագ քահանայութեան կոչումն. իսկ պահանջողութեան գործը շարունակել ըստ կարգին։

27 Ապրիլի. Սինոդը վաւերացրեց Աստրախանի Կոնսիստորիայի վճիռը, որով ա. Սաւարօպոլի Բարդուղիմէոս քահանայ Բէկգուլեանը ենթարկվումէ երկամեայ եկեղեցական ապաշխարութեան ի խրատ և ի զգուշութիւն միւս հոգևորականաց, չըհասական աստիճանում առանց օրինական թոյլտուութեան իւր ծուխն չեղող Ս. Խաչ քաղաքի Յովհաննէս Առաքելեան Արզումանեանի պսակը կատարելուն համար և այն՝ Վարագայ Ս. Խաչի բարեկենդանի կիւրակէ լոյս երկու շաբթի գիշերը, ը. պսակեալները ենթարկվումեն վեցամեայ եկեղեցական ապաշխարանաց։

—

27 Ապրիլի. Սինոդը վաւերացրեց Ղարաբաղու Կոնսիստորիայի վճիռը, որով Ղարաբաղու թեմի Նորաշէնու կենդրօնի գործակալ Յակովբ քահանայ Տէր Կարապետեանցը առանց թոյլտուութեան ինամեկան չորրորդ աստիճանի պսակ կատարելուն համար արձակվումէ պաշտօնից և ենթարկվումէ մի ամեայ ապաշխարութեան՝ ժամերգութեան ժամանակ եկեղեցու գրանը առանց փիլոնի Սաղմոս քաղելով ի տես ժողովրդեան և ի զգուշութիւն ինքեան և այլոց։

—

4. Մայիսի. Նոր Բայազէդ գաւառի Բաշ—Գիւզալդարայ գիւղում վերաբնակող Երիգոր Տէր Յակովբեանը որ գնալով Տաճկաստան՝ Աղթամարայ Խաչատուր կաթուղիկոսից քահանայ էր ձեռնադրուել վերակոչուելով Յակովբ քահանայ, և վերադարձել էր Նոր Բայազէդ, և որին Սինոդը 1886 Թ. Նոյեմբերի 28-ին որոշմամբ ուղարկել էր Սևանայ անապատը ապաշխարելու ի շարս ունկնդրաց մինչև գործի վերջաւորելը, այժմ՝ դիջանելով նորընծայ Յակովբ քահանայի ծերունի մօր աղերսանքին ու ընտանեաց կարևկգելի վիճակին որոշեց—արձակել նորան Սևանու անապատում՝ապաշխարելուց և թոյլ տալ գնալ տուն խնամարկելու իւր ընտանիքը՝ իրաւունք չունենալով քահանայագործութիւն անել ո՛չ Նոր Բայազէդ քաղաքում և ոչ գիւղօրէից մէջ, ատորագրութեամբ պարտաւորելով որ, նա իրրև աշխարհական՝ մնայ իւր տանը։ Սինոդը իւր այս տնօրէնութիւն որոշեց յայտնել Սևանու վանահօրը և Նոր Բայազէդու գործակալին։

—

4. Մայիսի. Սինոդը վաւերացրեց Երևանայ Կոնսիստորիայի որոշումը որով Նաղուրլուի Պօղոս քահանային իւր զանազան ղեղծմանց համար զգաստրելով քահանայագործութիւնից երկու տարի պիտի ապաշխարէ Սևանայ վանքում ի խրատ և ի զգուշութիւն այլոց։

—

4 Մայիսի, Սինոդը վաւերացրեց Երևանայ Կոնսիստորիայի որոշումը, որով Դարալագեազու գաւառի Ալաքլուեցի Պետրոս քահանային Տէր Ստեփանոսեան ենթարկվումէ Խորվիրապի վանքում մի ամեայ ժամանակով եկեղեցական ապաշխարութեան զանազան ղեղծմանց և ապօրինաբար պսակ կատարելուն համար, ապօրինի պսակն ևս անվաւեր է համարուած։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

—

Ա՛մուլի տակից դուրս եկաւ ՕՐԱՑՈՑՑ 1888 նահանջ թուականին Քրիստոսի, ունի ընդարձակ յաւելուած — Տօմարական Համառօտ գիտելիք, և կարգաւարութիւն ժամասացութեան։

Ա՛ճառւում է թեմական և Հոգ. Կառավարութեան Բաժաններում, Տփխիսոյ Կեդր. գրավաճառանոցում. Երևանում՝ Պ. Կարապետ Դադամեանի կրպակում. Ղէ-քանդրապօլում՝ Պ. Մատթէոսեան Ա՛. Եհսպետեանի կրպակում և Յայկոյս Կովկասու գրավաճառանոցում և Տպարանական Ժողովի մօտ։ գինն է 20 կ.

Յուլիսի վերջին լոյս կըտեսնի, Պետերբուրգում տպուած,

„ՍՈՒԱԿ“

ԼԻԱԿԱՏԱՐ ԵՐԳԱՐԱՆԻ

ՀԻՆԴԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ։

Բաժանորդ գրվողները պէտք է յայտնեն իրանց ցանկութիւնը մինչև Յուլիսի 25-ը։ Բաժանորդաց անուանները պակաս կը են «ՍՈՒԱԿԻ» վերջում։ Իւրաքանչիւր օրինակի բաժանորդագինն է մի րուբլի։ Հաղց. Священнику Армянскаго Собора Григорію Григоріанцъ, въ Баку.

Հնութիւնք Հայրենեաց	—	40
Հռոմէական եկեղեցի	—	80
Հանդէս բացման Ճեմարանի	—	10
Հրահանգ քերականութեան	—	30
Հրահանգ աւագ քահանայից	—	10
Հրահանգ վասն թեմական տեսչաց	—	20
Ձայն բազմաց	1	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ծամագրոց	8	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի	3	—
Ձայնագրեալ շարական Յեսայ	60	—
Ճանապարհորդութիւն Հակտհաուզէնի	—	80
Ճաշոց	60	
Մաղթանք վասն Հայրապետի աղդիս	—	20
Մաշտոց ձեռնադրութեան քահանայից և Մ. իշխանութեան	4	—
Ցաւելուած Ծամագրոց ձայնագրեալ	—	20
Նախակրթանք. Բ. մասն	—	45
Նոյն Գ. մասն	—	50
Ուխտանէս եպիսկոպոսի պատմագրութիւն	1	20
Ուղղագրութիւն	—	50
Պատմութիւն Ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ	—	40
Պատմութիւն Խաչակրաց	—	30
Պատմութիւն Հայոց Լեհաստանի	—	30
Պատմութիւն Հռոմոսի Վեանուց ի Շիրակ	—	20
Պատմութիւն Սեւանայ	—	20
Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ	2	—
Պատկերասէր պատկերատեաց	1	—
Ջամբռ (պատմագրութիւն Սիմէօն Կաթուղիկոսի)	1	—
Սաղմոս Դաւթի	1	—
Սկզբունք բուսաբանութեան	—	15
Վաղարշապատ	—	50
Տեղեկագիր Ճեմարանի 1881—82	—	10
Նոյն 1882—83	—	10
Քնար Մշեցւոյ և Վանեցւոյ	—	30
Օրացոյց (1887)	—	20
* Օրէնք վայելուչ կենցաղավարութեան	—	40

(*) Աստղանիշ գրեանք հրատարակուած են ուրիշ տեղեր։

20 րուբլուց աւելի գնողին եւ դանձիկ վճարողին զեչում կը մնայ 20% (ճանապարհածախքը գնողի վերայ)։

„ԱՐԱՐԱՏ“

ԱՄՍԱԳԻՐ

Կը հրատարակուի ամիսը մի անգամ. բաժանորդագրութիւնը տարեկան է և սկսւում է Յունվար ամսից. բաժանորդագինն է Ռուսաստանում՝ 4 րուբլի. Տաճկաստանում, Պարսկաստանում և Եւրոպայում՝ 5 րուբլի, Հնդկաստանում 6 ր.

Մրագիրն է

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՑԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

Արարատում կը հրատարակուին նաև վէհափառ Կաթուղիկոսի և Սինոդի կողմից եղած վարչական այլ և այլ հրամանագրութիւնները և Սինոդի օրագրութիւնների քաղուածներ։

Արարատում կը հրատարակուին յիշատակարաններ՝ երբ և պատմական տղիւր. կարուստպատուին լրագրներից իւր ուղղութեանը յարմար յօդուածները, վերադրելով ըստ բովանդակութեան։

Կը հրատարակուին նաև լուրեր «Այլ և այլք» վերնագրով։

Հայաբնակ քաղաքներում և գաւառներում առաքելու ցանկացողները թող դիմեն առաջնորդական Հոգ. իշխանութեան գործակալներին կամ ուղղակի Ս. Էջմիածին. Հասցէն Эчміадзинъ. Типогр. Комитетъ—Տպարանական Ժողովին։

Վաճառւում է կովկասեան գրախանութում

«ՈՍԿԻ ԲԶԵԶ»

ժողովրդական վէպ Եղ գար Պօ. Թարգ. Գրիգոր Շահբազեանի գինն է 20 կոպ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Յովհաննէս Յովհաննիսեանի գինն է 60 կոպ.